765
L. I.5

ՍԽՕՑ

ԱՄՍԱԳԻՐ

ԱՂՑԵՑԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱՑԱՆ, ԳՐՊԻՏԱՑԱՆ
ԵՒ ՔԱՂԱՔԱՑԱՆ

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ԵՐՋԱՆ ՄԻՍՄԵԱՑ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
1874

ՑՈՒՑԱԿ ԳՐՈՑ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՑ

ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

եւ ԱՐՁԱԳԱՆՔԻՆՔ ՆՈՑԻՆ

	Գ.	Փղ.
Ագնէս, Հայերնիզ վերածէ՞ն Յ. Քնարբեանցի, տպեալ 1872.	4	
Ազօթագիրք Սբրատան տուէալաց, աշխարհիկ լեզուաւ.	2	
Անուշիք Ի Սիօն, ոգեայ Մ. Թաղիադ. 1869.	1	20
Առաքինութեան ճամբան, կամ Ընտրոր մանկանց, թարգմանեց Տ. Հ. Թ. Ս.	7	
Աւետարան տեղեկ. Ս. Եկեղեցւոյ մէջ կարդացուելիք աւետարաններն են.	3	
Աւետարան վոքր, Տպեալ 1867.	6	
—Նոյնը Կաւարտամոլ. Տպեալ 1867.	12	
—Նոյնը ձաշու. Տպեալ. 1868.	30	
Բանախօսութիւն, աշակերտաւհաց մէջ. Տպեալ 1869. (**)	1	
Բնագրութիւն Հրաժարման՝ եւ դրջման եւ առաւօտեան երգոց Նորհալ. (*)	6	
Գաղիկ վերջին արքայ Հայոց Բագրատունի, ողբերգութիւն. Տպ. 1672.	5	
Գործք Առաքելոց, Տպեալ 1867.	6	
Գործք Ոսկէղինիկ Սամուէլ Ոսբերի հրեի. Տպեալ 1867.	3	
Գովասանք. Տպեալ 1867.	3	
Եղիշէ, պատմութիւն Վարդանանց պատերազմին ընտիր գործ նախնեաց.	7	
Երեւոյթ կրից. Տպեալ 1851.	7	
Երկու խօսք, եկեղեցւոյ պաշտօնէից ուղղուած. Տպեալ 1873.	3	
Նվրեմ խուրի, աղօթագիրք, գործ նախնեաց, Գ. տպագ. 1870.	7	
Չանազանութիւն հինգ զարուց. Բ. տիպ. 1862.	40	
Ընդհանրական թուղթ Եփրեմի Շնորհալւոյ. Տպեալ. 1871.	18	
Թանգարան խրատու. Գ. տիպ 1870.	18	
Թաղիոզի տէտրակ տարեկան, Տպեալ 1839. (*)	3	
—Նոյնը չափաթիւռան. Տպեալ 1838 (*)	2	20
—Նոյնը Ս. Ցակովբայ տաճարին մէջ կատարուած թաղիօզներու համար	4	
Թուաբանութիւն համառօտ, Ս. Պ. Փափազեանցի, Գ տիպ. 1869.	3	
Ժամագիրք խոշորագիր. Տպեալ 1866.	20	
Ժամագիրք տառնի. Տպեալ 1870.	50	
Խնդիր Ս. Տեղեաց եւ նորա պաշտօնական քննութիւնը, Տպեալ 1871. (**)	6	
Խորհրդածութիւն Ս. պատարագի, գործ նախնեաց. Տպեալ 1842.	10	
Խորհրդատետր Ս. պատարագի, Տպեալ 1873.	10	
Կարգադրութիւն առողջութեան, Տպեալ 1871.	5	
Կենսագրութիւն Բասքալայ, Տպեալ 1869.	2	
Կտակարէր հոգեշահ բանից, ղրկոյ Աբգար Խոճենց, Տպեալ 1853.	6	
Կրթարան Աւետարանական բանից, Գլաս Ա. Սիմէն Պետրոս.	1	20
" " " Գլաս Բ. Սամարացի.	1	20
" " " Գլաս Գ. Որդիք Աստուծոյ.	1	20
Համապատուութիւն երիտասարդ առաքելոյ, Տանդերմ յաւելուածով.	4	
Համառօտութիւն Քրիստոնէական ուսման. Տպեալ 1873.	4	
Հայկի վիպաց, Տպեալ 1852. (**)	6	

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Որ ունի աստղանիշը (*) նշան Հրոյն հաստատիւ ընտրուած է յայտնի.
Իսկ երկուքը (**) Ընտրութեան տպատաճ ընտրուած։



ՍԻՈՆ

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Թիւ 1.

ՀԱՅՆԱՒԱՐ 31
1874.

ԱՄՍԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ՆՈՐ ՏԱՐԻ

ՆՈՐԱՄՈՒՏ տարւոյն հետ ամեն ոք պարտք կըզգայ առիթ ինչ կանգ առնուլ և յետադարձ ակնարկ մի ձըգել անցեալին վերայ և նպատ մէջ կատարուած նշանաւոր իրողութիւններն դիտել, քննել և բազդատել, ներկայիս եւ ապագային համար օգտակար հետեւութիւններ հանել: Ա յս յետադարձ ակնարկը, այս քննութիւնը կարեւոր և օգտակար է ինչպէս թէ պակիր և գահակալ իշխաններու համար, նոյնպէս անշուշտ իւրաքանչիւր մէջ գրելեաներով իւր մերկութիւնը ծածկող ազգասէր համար: ինչպէս հօր մը, նոյնպէս մօր մը համար. մէկ խօսքով ինչպէս գուժաղանին յեղած եւ դեռևս ղեկավարին գուռն հասած ծերունւոյն, նոյնպէս բոլոր ազգային յոյսերով մեռնող երիտասարդի համար. վասն զի ժամանակը, որ յԱստուծոյ մարդկանց տրուած գերագոյն պարգեւ մի է, մտածուրի մը չզգացուցանելը, այլ առ հասարակ ամեն մարդոյ: Ժամանակը կենաց պահպանութիւն համար տրուած է եւ այդ էն կենաց բուն էութիւնը եւ մարդկանց ճշմարիտ բարութիւնը գտնելուն մէջ է, որ ժամանակով և ժամանակի մէջ կը կատարուի. և ոչ է կեանքը չը սիրող. քաղցր է կեանքը ամենուն համար. մէկ գահակից վերայ բարձող վհատութեան եւ մէկ անյարկ ապրուստին

համար, թէ ապահին և թէ վնասակար նին համար, թէ ախորժ և թէ ծառային համար, մէկ խօսքով թէ սիրնոյ և թէ ապահնոյն համար. հետեւաբար ինչպէս ասացինք, ամեն ոք, ամեն հասակի և վիճակի տէր մարդիկ առ վայր մի կանգ առնելով կամ խորին հոգւոյական ժամանակի գործած սխալ աւերանաց վերայ ցուցած եւ սխրագին նայուածք մի կը ձգեն, կամ զսարթի և ժպտալից դիմօք ժամանակի կերտած հրաշալիքներն դիտելով կը աքանչանան և կը հիանան. ուստի եւ կը փառաւորեն ժամանակի Աբարիչը, որ տուած է ժամանակը մարդկանց իբրեւ անուշահոտ և անկողմնակալ գործառոյ նոցա գործունէութիւնը քաջալերելու և վարձատրելու. հեղգութիւնը, ծուլութիւնը և թմրութիւնը նզովելու և պատժելու. զոյս ամենեւին կը տեսնենք, երբ անցեալին փոշին կը մաղենք. երբ անցեալ դարերը ի վկայութիւն կը կոչենք և երբ ազգաց անցեալ կենաց պատմութիւնը կը թերթատեմք. վասն զի հոն պիտի տեսնենք, որ ժամանակը ուր խմորութիւն եւ հեղգութիւն կը տիրէին, քանդած, աւերած, կործանած եւ ընկած է շատ ամրոններ, տերութիւններ և ազգեր, որոց հակառակ այն տերերը, ուր աշխատութիւնը իբրեւ կենաց միակ պնդանդ ընդունած է, այն տերերը ժամանակը չենած, կանգնած և վերածնած է շատ տերութիւններ ազգեր և տէրունդներ: Երբ անցեալ դարերու տարեգրութիւններն բանանք մեր աչքին առջեւ, պիտի տեսնենք որ ժամանակին իբրեւ անուշահոտ գործառոյ իւր մէկ ձեռքով մահ, ապականութիւն եւ աւերած սփռած է հոն, ուրկէ աշխատութիւնը վտարական եղած է. իսկ միւս ձեռքով կեանք, շինութիւն եւ վերածնունդ այն տեղ ուրկէ հեղգութիւնը իբրեւ յետ կենաց հալածուած է: Երբ անցած ազգերուն իրենց գերեզմանէն կոչեմք. պիտի վկայեն, թէ ժամանակը իբրեւ ծնող յառաջադիմութիւն միշտ եւ անընդհատ կը դիմէ դէպ ի արշալոյս, դէպ ի նորոգութիւն և կեանք. իրեն համընթաց եղող ազգերն իւր սրընթաց կառքին մէջ առնելով կը տանի դէպ ի լոյս և կեանք. իսկ իրեն հետ չընթացողներն կը թողու խաւարի մէջ, կը մատնէ թշուառութեան ձեռքը, կը ծերացնէ աղքատութեամբ և ապա գերեզման կ'իջեցնէ: Այս ամենը ակն յայտնի ճշմարտութիւններ են. վասն զի ուր են հնութեան ամենէն պանծալի ազգերն. ուր են նախկին դարերու աշխարհատարած և աշխարհակալ տերութիւնները. ուր է Հռոմէական ընդարձակ պետութիւնը, ուր են Ասորեստանեայց, Կարկեդոնացւոց եւ այլ ազգաց թագաւորութիւնները... սա քա ամենքը անաշխատութեան արդիւնք եղող բազմաեսակ ներքին եւ արտաքին եղծմամբ անկան ժամանակի հարուածոց տակ, մանրեցան, փոշիացան և անյայտ ցրուեցան իրենց բեկորներն. սոքա ամենքը իրենց վերջ կեանքով, բարքով և սովորութեամբ ժամանակի աւերիչ ձեռաց հանդիպելով մահացան: Քանի որ բարուց պահպանութիւնը և այլ զեղծմունք անաշխատութեան հետեւանք են, չը կայ կեանք և ոչ կենաց տեւականութիւն և յաջողութիւն առանց աշխատութեան. վասն զի բնութեան Աբարիչը իբրեւ կենաց առաջին անուանդ տուած է մարդկանց աշխատութիւնը և ժամանակը:

Այս խորհրդածութեանց հետ բնականաբար հարցում մի կը գայ մտքերնիս. Թէ արդեօք մեր Ազգն ժամանակին հետ յառաջ կը քալէ. ար-

պեօք դէպ ի լայս և նորոգութիւն կը դիմէ. Թէ անարձնութեամբ ժամանակէն յետ մնալով խաւարի և մոռացութեան մէջ կը խորխափի: Թէև դարերը կանցնին, տարիներն կը սահին, օրերը արագ արագ կը վազեն և ժամերն ու վայրկեաններն միշտ կը փոփոխին, միշտ կը նորոգին. արդեօք մեր ազգային կեանքն եւս այս անընդհատ փոփոխութեան և նորոգութեան հաղորդ է, Թէ խափան անմահն՝ կը մնայ միշտ նոյնութեան մէջ: Այս է մեր փնտռած խակ կէտը եւ ամենակարեւոր հարցը նոր տարւոյ առթիւ եւ պէտք է ամեն ազգային անհատի ուշքն և մտադրութիւնը գրաւէ:

Եթէ սոյն հարցման պատասխանը ուրիշներէն ապահովէ, լաւ դիտեմք, որ ամենք ազգային ներկայ կեանքէն բոլորովին դոհացած և ապագային ամենեւին անոյշ պիտի պատասխանեն, Թէ չը կայ մեր Ազգի համար փոփոխութիւն և նորոգութիւն. վասն զի ամեն տեղ տեսնուածներն ալ այլ ինչ են, այլ ախտաբոյր պատկերներ, յետադիմական երեւոյթներ և հակազդային դարձուածքներ. խակ ոմանք ընդհակառակն Ազգին յառաջադիմական ոգւոյ ներկ խղճմտութիւնէն յափշտակուած, յոտնկայս ապագայն մը երազելով լսուած պիտի պատասխանեն, Թէ՝ մեր ազգի կեանքը վայրկեաններու փոփոխութեան, օրերու և տարիներու անընդհատ նորոգութեան պէս միշտ կը նորոգի. կը զարգանայ և կը բարգաւաճի. վասն զի այսպիսեաց համար ամենախորին չարժամ մի հակայաքայլ յառաջադիմութիւն է. ա. Բ. գ. ի սկզբնատարութիւնը զերծ ընդարձակ մշակութիւն. ուստի նախապատրաստեցաւ աստղուածը եթէ ոչ ակադեմական, անշուշտ համալսարանական բարձրագոյն դասեր և տաճարատրական լսկ անուն ունենալը. տահմնադրական ազգայ հաստատուն է: Եթէ այս երկու տեսակ պատասխաններն զատ զատ քննենք, երկուսն եւս մասամբ իրաւացի պիտի գտնենք: Իրաւունք ունին նոքա, որք Ազգի ներկայ կեանքը անգոհացուցիչ կը գտանեն. վասն զի եթէ ազգային ներկայ և անցեալ կեանքերն համեմատեմք իրարու հետ, աւելի կորուստ պիտի գտնեմք, քան Թէ գիտ. աղքատութիւն քան Թէ ճոխութիւն. նահապետութիւն ազգայնութեան ամենակերպ տարերայ քան Թէ առաւելութիւն և բարգաւաճանք, իրաւունք ունին. վասն զի չունինք այսօր մէջ նախկին հարստութիւնն, ճոխութիւնն և զօրութիւնը, չունինք մէջ Հայոց աշխարհ իշխանութիւն, մէջ Այրարատեան թագաւորութիւն, ոչ Բագրատունի և Ռուբինեանց հարստութիւնք: Ուրեմն մեր արդի կեանքը հետեւ համեմատութեամբ նորութիւն և առաւելութիւն մի չունենալէն զատ մեծ կորուստ ունի: Թողնեմք այս նիւթական կորուստներն, նիւթական աղքատութիւնը և ախտութիւնը, բարոյական մեծ կորուստներ, բարոյական մեծ ազգատութեան և ախտութեան մէջ ընկած ենք: Ո՞ր են ջրոտ և հինգերորդ դարու հայերն, ուր նոցա քրիստոնէական սիրով վառուած ոգին, որով հայրենեաց և հայ բենատուտ օրինաց պաշտպանութեան համար մահ քան զկեանս ընտրէին. ուր են այն ժամանակի հոյ կանայք և աղիներ, որք գիւցազնուհիք և առաքինութիւն հարսներ էին, որոց միակ սիրելութիւնն էր Ս. Գրոց ընթերցուածներն և Աստուածային մրմնջիւնները. ուր է նախկին ընտանեկան անարատ կեանքը, որոյ ծանկութիւնն տակ և ամենատկան առաքատուին մէջ կը թագուրէին որքութիւն և ուշխատու-

թիւն, ուր են աւետարանական այն ընդհանուր մշակներն, որք ազգանուէր եւ պատուական ստանց յաւատխոտելոյ՝ մի կողմէն կ'արտատուէին հայրենեաց լուսաւորութեան եւ ժողովրդեան ան հնարին ազգակից վերայ, միւս կողմէն արտատուքներին սրբելով ժողովրդեան բարոյական ուժը զօրացնել կը ջանային. քրտամբք եւ արտասուօք կը ցանեին մտաւոր զարգացման սերմերն. ուր են այն ընտիր եւ անձնազոհ հովիւները եւ հայրապետներն, որք հոգոյ էին հայրենեաց մէջ. իսկ պաշտպան հայրենեաց՝ օտարոյ առջեւ, որք քանզ հաւանալով ազգային միութեան խորհուրդը եւ զօրութիւնը, աղաչանօք եւ արտասուօք կը յորդորէին ժողովուրդը՝ ի սէր և՝ ի միութիւն. վերջապէս ուր է այն ուսումնասիրութիւնը, ո՛րով Հայաստանի քաջալերելոյ անկոտրում եւ արամախոհ զաւակունքը անհնազոյ ոտ ք մանաք կորելով կերթային ուսման ՅԱՀԷՆս, ուսման՝ ի Հռոմ, այլ ՅԱղեքսանդրիա, շատերն ի Բիւզանդիան և ուրիշներն յԵգեսիա. ուր նա քա ժրաջան մեզմէս հայրենեաց վնասու թեան, յաւաջադիմութեան և լուսաւորութեան համար բարոյական մեզը և մոմ կը պատրաստէին: Չը կան այսօր անունդ ոչ մին և ոչ միւսը. այլ փոխանակ նախկին Թագաւորութեան և Տարտուքեանց տիրութեան և նիւթական ու բարոյական աղբիւրութիւն. փոխանակ նախկին քաջութեան, վաստութիւն. փոխանակ քրիստոնէական ճշմարիտ սիրոյն և անկեղծ կրօնասիրութեան, կրօնական անտարբերութիւն և կամ կրօնամոլութիւն. փոխանակ նախկին առաքինի և պիւղալնուհի հայ կանանց և աղիներուց, անոյշ սիրեցող, լինուի և նորասիրութենէ պերճալ հայ կանայք և աղիներ. փոխանակ աւետարանական ընտիր վարկաց, անիրաւ մամոնային, ագահութեան, մարդահաճութեան և փառասիրութեան միակ գինուորներ. փոխանակ անձնազոհ հովուաց և հայրապետաց, անձնասէր և օտարասէր հովիւներ եւ հայրապետներ. մէկ խօսքով փոխանակ նախկին ուսումնասիրութեան, ժողովրդեան ընդհանուր ապիրատութիւն. ուրեմն զարձեալ կ'ասեմք, իրաւունք ունին նոքա, որք ազգին կեանքը եւ վիճակը կ'ողբան. վասն զի տակաւին կը քնանամք, տակաւին անոյշ երազ ներուն մէջ կ'ապրինք:

Ա՛յլ սակայն չեմք կարող ասել թէ նոքա և ս ջունին իրաւունք, որք Ազգին վիճակը գոհացուցիչ յառաջադիմութեան մէջ տեսանելով՝ ուրախութենէ փոխել կը հնչեցնեն. իրաւունք ունին, վասն զի չը կան այսօր անոյելոյն ազգասէր իրողութիւնները. չը կան ամբողջ Հայազգը եւ Հայաստանեայց Եկեղեցին տագնապող կրթական տարապարտ վէճերուն. թէեւ ցարդ այս վէճերուն առգաստքն եղող յանձնաժողովները իբր նենգութիւնները կը շարունակէ. մերիմ հայը իբր իրաւունքներէն կատարել ջանալով, մերիմ խաղաղասէր բանաբարելով, մերիմ անտի—քրիստոնէական ոգւով ընդհանուր քրիստոնէութեան միակ պարծանքն եղող ԹՈՒՉ միայն հայուն կարծելով սանահոս առնելով և կոտրտելով և մերիմ Հայ—եկեղեցականին կըտանէին եկեղեցական զգեստներն քաշել պատառելով. Չը կան այսօր այլ եւս մեզ համար այն արիւնաներկ դարերն, յորս կամ կայսերք Յունաց, կամ խալիֆայք Հագարացւոց բիւրաւոր հայեր կը գերէին և նոցա անմեղ և անպարտ արիւնը գետոցին կը հոսեցնէին. չը կան այլ եւս Պարսկաստան, Յունաստան, Հագարստան և կամ բնաւ բարբարոս ազգաց հալածանք.

ներին հարատահարութիւնքին, վտարմանքներուն, չկան այս ամենը. այլ այս ամէն արհաւրանաց, այս ամէն ազէտներ մեզ ազատութիւն կը վայելեմք. փոխանակ այն արիւնայօդ գարերուան, աղատութեան, լուսաւորութեան, մեկ խօսքով յառաջադէմ և լուսաւորեալ ազգաց փառքը կազմող ժԹդ դարուան մէջ կ'ապրինք. փոխանակ այն բարբարոս և արիւնկզակ բռնաւորներուն, բարեհոգի կայսեր մը հովանաւորութիւնը կը վայելեմք և փոխանակ կրօնական բռնաբարութեանց, ամենայն ազատութեամբ մեր կրօնական պաշտամունքներուն ու պարտաւորութիւնքը կը կատարեմք։ Իրաւ է որ այն ամենը ուրախական և մխիթարական են, կը խոստովանիմք զայս. սակայն այլ է ուրախանալ այլ է յանգստակեալը. վտերը հնչեցնելու չափ, կաքաւելու և ծափահարելու չափ ուրախական չեն. ինչպէս վերն նշանակուած սխալը պատկերներն յառաջացնելու չափ ալ խոր չեն։

Որ և իցէ բան մի ճշդիւ գնահատելու համար պէտք է իւր սեռակին եղանկներու հետ համեմատելով գնահատել. ապա թէ ոչ նորա յորդը կամ չափին աւելի նուազեցուցած կը լինիմք և կամ սաստիկ բարձրացուցած, այսպէս եւս եթէ մեր Ազգի արդի վիճակին առանց ժամանակին և այլ պարագաներն ի նկատի առնելու անցեալ կենաց հետ համեմատինք, բուն ճարիք չենք կարող գտնել. այլ շատ բան հանար խափան անպահպանելիք և ամենց համար ևս չափին աւելի գոհացուցիչ. Մեք այս խօսքով ըսել չեմք ուզեր, թէ Ազգին վիճակը չունի արատաւոր այժմեան կողմեր և կամ չունի ուրախական կէտեր. այլ ընդհակառակն կան մեր համոզմունքն այն է, որ ամ ազգ կամ ազգի վերակենդանութեան ձեռնտու լինիլ, ազգին վերքերը տեսած ժամանակ փոխանակ անոյշ կոծելու, պէտք է մի կողմէն քննել, ընտրել և շաշափել և միւս կողմէն ջանայ լուալ, դարմանել և ամեն կերպով ապաքինելու հոգ տանել. նակ Ազգի արմատութիւնը կամ ամբողջութեան տեսած ժամանակ առանց յառաջադիմելու պէտք է ուրախանայ. վասն զի եթէ այդ ընթացքին, այդ յառաջադիմական փոքրիկ խլրտումը եթէ մեր անցեալ կեանց հետ, կամ եթէ ժամը ընդհատ ազգակից կենաց հետ համեմատենք. խիստ փոքր և անհնար պիտի գտնենք։

Յառաջադիմութիւնը ներքնատարութիւն է. վասն զի յառաջադիմ Աստուծոյ նախախնամութիւնը ուրանալ կընշանակէ. նակ յառաջադիմական փոքրիկ ցոյցի մը ծափահարութիւնը թերահաւատութիւն է և պարզապէս կուրութիւն. երկուսն եւս, այն է ամէն յառաջադիմութիւնը և ամէն թերահաւատական փաղհարութիւնը կամ ծափահարութիւնը հաւասարապէս յառաջադիմութեան վնասակար են. վասն զի ուր յառաջադիմութիւնը կը տիրէ, չը կայ այն տեղ գործունէութիւն, չը կայ աշխատութիւն, հետեւաբար եւ ոչ կենաց նորոգութիւն. ուր անհնար խլրտում մի յաջողակութեամբ կը ծափահարուի և փաղհարութեամբ կը հռչակուի, կը նշանակէ թէ չը կայ այն տեղ յառաջադիմութեան ձգտող ոգի, չը կայ խորհրդնութիւն տեսութիւն յառաջադիմութիւնը իւր իսկ արժանեաց տեսնելու համար։ Ուստի անհերքելի յառաջադիմականին, ձգտող ազգասիրին պարտաւորութիւնն է Ազգին թերութիւններն տեսած ժամանակ անյոգնահատ խոր զննել, նոցա հետեւանքներն հետեւտեսել և լուսոյն գործման մատուցանել. իսկ յառաջադիմական փոքրիկ չ'ընդ տեսած

ժամանակ պարտաւոր է առաւել քան զաղերել, անձամբ օրինակ գառնալ, ոչ թէ շողբորթել և ջախջախոյ գործեանեերով և ջատագովութիւններով պատրել։

Իսկ մեք Թոլլով ոմանց յուսահատ կածը, ողբը և լալիւնը և ոմանց չափազանց ուրախութիւնը կը խոստովանիմք. որ Ադգը անցելոյն մէջ, 73ին մեծ հարուածներ և խոր վերքեր ընդունեց, թէպետև այս խոստովանութիւնը ծանր է ղգայուն սրտերու համար, բայց ըստ այդ է և իրական. վասն զի վարչութիւնը իւր հակառահմանադրական ընթացք քալ մի կոչմէն, երեսփոխանութիւնը իւր պատակտեալ դիրքով միւս կողմէն Ադգին վերայ շատ ծանրացան. ընդհանուրին շահը և օգուտը մոռնալով հաճոյից ղհուեցաւ. ազգի յառաջադիմութեան խնդիրը անձնական կրից առջեւ խոնարհեցաւ. պարբերքի հրաժարման խնդրոյն մէջ, որ օտարանպատ նպատակներով յուզուեցաւ, ազգային գաստիարակութեան և վերաշինութեան վերաբերեալ խնդիրները խորտուղեցան, յիմարաբար մոռնալով խորհրդարանութեամբ և նեղգութեամբ հայը հայուն դէմ զինեցաւ. գործաւորը իւր գործը, բեռնակիրը իւր բեռը, խոնութիւնը իւր խոնութիւնը Թող տալով ոմանց ազգանենդներու եռեւէն գնացին և նոյն ազգակործան նպատակին ծառայելին մեքենայաբար. ազգային իշխանութիւնը անարգեցաւ մի քանի պաշտօնա. մներու ձեռամբ. մեկը խիզճ չըրաւ առաջնորդական պաշտօն մի ձեռք բերելու համար Մշեցին իւր համարիւն Սամաթիայի եղբօր դէմ զինեց. մի քանիներն իրենց կուսակցութեան, ոչ Ադգին, գործը յառաջ տանելու համար չը պատկառեցան և ոչ տակտին եկեղեցւոյ մէջ, Ս. Պատարագին առջեւ ոամիկ ժողովրդը գործիք չինելով Աւետարանի պաշտօնեայն հալածել։

Պէտք է խոստովանիլ, որ Ադգին այս դժբաղդ վայրկեաններուն, այս սըխոր ճգնաժամին մէջ տգիտային օրագրութիւնը եթէ ուղէր կարող էր ըստ իւր կոչման, ըստ իւր նուիրական պարտաւորութեան, եթէ ոչ բողոքէին, գոնէ մատամբ այս աղէտից առաջքն առնուլ. բայց նա ընդհակառակն անձնասիրութեան տարհանալով կողմնապահ ոգւով առաւել կրգրեր բորբոքեց, յուզեց, պատակտեց. մեկ խօսքով նա ինքն իւր բարձր կոչումն ոտքի տակ առնելով պարագլուխ եղաւ տգը նենգողներուն։

Չեմք կարծեր, որ 73ին Ադգային կենաց վերայ բացած վերքերն շուտով գոցուին վասն զի կեդրոնին մէջ անպատիժ գործուած չարիքներն գաւառաց մէջ եւս իրենց հետեւանքներն պիտի ունենան, որոց առաջին օրինակը Զմիւռնի տուաւ, վասն զի ազգային Պատրիարքարանի 3ուլիս 31ին պատահած դէպքը Օգոստոս 6ին Զմիւռնիոյ մէջ կը կրկնուի. դաս մի խռովարարներ առաջնորդարան կը խուժեն. խորհրդարանը կը կոչեն. եթէ Զմիւռնիոյ մէջ այսչափ, որ ամենէն լուսաւորեալ քաղաքն համարուած է, հապա ինչեր տեղի չը պիտի ունենան վաղը ուրիշ գաւառաց մէջ։

Ի՞նչ պէտք է առնել այսչափ աղէտից համար. լալ և կսկծել անշուշտ. այո՛ լալ և կսկծել, բայց ոչ անշուշտ. հետազօտել թէ ինչ է ասոր պատճառը, և կարելի եղածին չափ գործման առնել. ջնջել և քննել թէ ինչ էր պատճառ Ադգ. վարչութեան տարտամ և հակասահմանադրական վիճակին. հետազօտել թէ, երեսփոխանութիւնը պահակատ և չարժուղ հոգւոյն ուսոյմ

ընչեցին. Թէ՝ ինչքա՜ն համար մեր ազգին մէջ շատ կենսական խնդիրներ կը յուզուին, բայց միշտ կիսատատար կը մնան. ինչքա՜ն համար մանաւանդ շահադէտ անձինք շատ անգամ կը յաջողին Ազգին մէջ խռովութեան սրտմներ տնկել և մեծամեծ խոչընդոտներ յարուցանել. մէկ խօսքով հետազօտել թէ ի՞նչ է Հայ — Օրագրութեան անկերպարան վիճակին պատճառը. այս ամենուն նուրբ հետազօտութիւնը ամէն Հայու պարտաւորութի՛ւն է: Մեք ինչպէս ուրիշ առթիւ ասած եմք, դարձեալ կ'ասեմք, Թէ տգիտութիւնն է միակ պատճառ. զի "Ամենայն չարիք յանուսումնութենէ են": Ի վաղուց անտի տգիտութիւնն եղած է մեր ամենամեծ թշնամին. վասն զի նախաձեռնեց մեր նախկին փառքն ու մեծութիւնը կորնչուցընել. եւ սիրտ կորնչեցնէ նոյն իսկ ազգութիւնիս եթէ չը ջանայ նորա դէմ պատերազմիլ լուսոյ եւ յառաջադիմութեան զինուորներ հասցնել: Բազմադարեան փորձերն կը ստուգեն, որ ապտ մը հրով, հալածանօք չը կործանիր, եւ չը ջնջուիր. սակայն տգիտութեամբ շատ ազգեր անցեալին փոշիներուն տակ անյայտած են:

Ուրեմն պէտք է քաջութեամբ պատերազմիլ տգիտութեան դէմ՝ ներկայ մտաստղ սերունդը զգաստիարակելով, որոյ համար հարկաւոր է կամ և ջանք. ուստի Սիօն պարտք կըզգայ տարեմուտին առթիւ մտիլել բնութեան Ս. բարձէն աւին Հայ — անհատի կամք և ջանք ի՛ շինութիւն և ի՛ վերակենդանութիւն Հայ — ազգութեան:

Ս. ԱԹՈՌՈՑՍ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՑ 1874Ի ԱՌԱՋԻՆ ԲԱՑՈՒՄՆ

Ս. Աթոռոյս ընդհանուր ժողովոյ 1874ի նիսանեան առաջին բացման առթիւ, որ ամսոյս 10ի օրն եղաւ, Աժե. Ս. Պատրիարքն հետեւեալ առենաբանութիւնը ըրաւ:

"Ա յսօր՝ ներկայ 1874 տարւոյս Միաբանութեան ընդհանուր ժողովոյ առաջին բացման առթիւ իմ պարտս ուրախութիւնը կը յայտնեմ բոլոր Միաբան եղբարցս, և լի եմ յուսով, որ այս տարի Միաբանութեան ընդհանուր ժողովը աւելի սիրով պիտի տեսնայ նախորդ տարուան հաշուեկշիռը և Տնօրէն ժողովոյ տեղեկագիրը և անոնց վերայ օգտակար և արդիւնաւոր տնօրէնութիւններ պիտի ընէ:

"Թէպէտ նախորդ Տնօրէն ժողովը իւրներկայ տեղեկագրով 1872—73 տարւոյն մէջ պատահած զանազան գործոց վերայ տեղեկութիւն կը տայ, ինչպէս ժամանակ ժամանակ տուած է, սակայն ես ևս հարկ կը համարիմ նոյն թուոյն մեր վարչական Թէ՛ ներքին և Թէ՛ արտաքին գործոց վերայ համառօտակի տեսութիւն մը ընել:

"Նախ՝ անցեալ տարւոյ Ս. Աթոռոյս Մայր Աթոռոյ հետ ունեցած յարաբերութեանց մէջ գժտարութիւն մը չէ պատահած. Թէ և Մայր Աթոռոյ Գահակալին կողմէն Միաբանութեան իրաւունքներն ըստ օրինի չը յարգուեցան, որոց Ս. Աթոռոյս վարչութիւնը երբէք տեղի տուած չէ, այլ միշտ զգուշութեամբ վարուած է. որպէս զի՛ ի չնաս Ազգային միութեան եւ յառաջադիմութեան վէճեր չը բարձրանան, եւ հետեւեալ եղանն եւս կը յուսամ՝ որ Ս. Աթոռոյս ներկայ վարչութիւնը խոհական կերպով կարգադրելու կը յաջողի, եթէ

դրան անհրաժեշտ համաձայն ձեռքեր չը մկքնուին : Մեր պարտքն է ամեն պարագայի մէջ առանց Մայր Աթոռոյ իրաւանց վնասելու ջանալ , որ ամեն գործ հաղորդ բանակցութեամբ լրա նայ (1) :

“ Երկրորդ՝ Աղգ . Կրօնական վարչութեան հետ ունեցած յարաբերութ թիւնին կանոնաւոր ուղղութեան մէջ է : Ս . Աթոռոյս կողմէն եղած խնդիրներն Վարչութիւը սրջարի որ կարդացած է Բ . Դրան մատուցեր է , թէ և ամենք չանգիտան Միաբանութեան իրաւանց վնասելու փորձեր ըրած են , բայց ապարդիւն մնացած են եղած փորձերն , ուստի ուրեմն կը համարիմ չիշատակելն անգամ :

“ Երրորդ՝ օտար ազգաց հետ ունեցած յարաբերութիւնին լաւ վիճակի մէջ չէ . արդէն Ձեզ ծանօթ է մեր եւ Լատինաց մէջ ծագած խնդիրը , մինչդեռ մենք այն խնդրոյն կ'ըլլ ազատինք , յանկարծ Յոյնք իրենց պատին մէջ ի վերուց ունեցած ոտրապետական առնչութեամբ ուզեցին մեր արգար իրաւունքը բռնաբարել , տղիխելով մեր գտաւոր սովորութիւնը , և ուրանալով մեր հետ ունեցած ընկերութիւնն նին : Նայած այս վտանգաւոր Տիրայ Միութեարքին օգնել , մենք Միութեարքին հետ գործելու երբէք ա-

(1) Գիտցած եմք որ Ս . Աթոռոյս հակառակորդներն , որ գոյութեան նպատակ մը կը չունան Ազգը պատրել , թէ Երուսաղէմայ Միաբանութեան եւ Մայր Աթոռոյ մէջ գոյութեան մը կը տնանի , և այդ գործութեան ամբիծ առաքն պրպտելով Ս . Աթոռն է , կարծելով Ամեն . Ս . Պատրիարքի առնչութեան վերի տպերն , կը համոզուին որ Երուսաղէմայ Միաբանութեան սկզբունքն է խաղաղասիրութիւն յարգալ ընդհանուր Ազգին , կը համոզուին որ Միաբանութիւնը պիտի լռել նոյն իսկ այն վնասներուն , յոր իր արգար իրաւունքը ջնասնի ձեռքերէ կը բռնաբարուի , երբ կը դժգոհ , ոչ իր ձայնը բարձրացնելովը Ազգ . մխիթարեան :

ռիթ չը տալինք . այլ միմիայն Յունաց կողմէն եղած հրապոյրն էր պատճառ , որ մեր իրաւանց դէմ զինեցաւ : Ս . յս ամենուն համար անհրկատիրը արդէն ընդարձակ տեղեկութիւններ կը պարունակէ (1) :

“ Գալով Ս . Աթոռոյս երևի մնից , ինչպէս հաշուեկշռութը ցոյց պիտի տայ , մուտքը ելից չը համապատասխաններ . Ս . Աթոռոյս մնից գլխաւոր աղբիւրներն են կալուածներն և Ուխտաւորը , բայց Ուխտաւորներէն եղած արդիւնքը ինչպէս յայտնի է հետզհետէ նուազելու վերայ է , և դարձը գանուած կալուածները երբէք արդիւնաբեր վիճակ մը չունին : որովհետև խոչընդոտներն պակաս չեն , թէ և մենք ամեն ջանք կ'ընենք : Ա յնպէս կարծուած է որ Ս . Աթոռը օրինաւոր հարստութիւն ունի և ամենևին կալուածոյ արդեանց կարօտութիւն և պէտք չունի . մինչդեռ Ս . Աթոռը իր Միաբանութեան պարկեշտ ձշաիւ ճարելու եկամուտ չունի . ասոնի համ պրպտան պարտքս է խոստովանիլ որ այսքան եղածն ալ միաբանութեան անձնազոհութեան և բաւականաւորութեան արգասիքն է , և ոչ թէ արդեանց առատութիւնը :

“ Ս . Աթոռոյս գործադրած վարժարանը ևս առջի տարիներէն լաւ վիճակի մէջ է , և յոյս մեծ ունիմ , որ օրքան գոր առաւել եւս կատարեալ վիճակի մը պիտի հասնի :

“ Արդ՝ այս ամենը այսօր Ընդհանուր ժողովոյ 1874 ի առաջին բացման առթիւ յայտնելէ զինի , կը յուսամ որ Ընդհանուր ժողովը խորին ուշադրութեան պիտի առնէ , իբրև նպա-

(1) Թէ Ս . Ծննդեան և Թէ ալ կարեւոր խնդիրոյ մասին ընդարձակ տեղեկութիւններ քաղելով Տիրայն ժողովոյ տեղեկագրին ուրիշ պատճառ առթիւ մեր կարգի ընթերցողաց կը հաղորդենք առաջարկ միջոցաւ : Ե . Խ .

տակ ունենալով Ս. Աթոռոյս պայծառ ուսմունքը և Ազգին յառաջադիմութիւնը։

"Նա և յատկապէս կը խնդրեմ Ընդհանուր Ժողովէն, որ մեր անցեալ թերութեանց չը նայելով, որք ի հարկէ անխորհրդութեան արդիւնք են, իբր աջակցութեամբ ինչպէս յառաջ նոյնպէս այսուհետեւ ի մի սիրտ և ի մի հոգի կը գործէ յօգուտ ընդհանուր Ազգին»։

Ս. Աթոռոյն երուսաղէմ
ԳԱՏՐԻԱՐՔ
ԵՍԱՅԻ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԻՆՉ ՊԻՏԻ ԼԻՆԻՐ ԸՆԿԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԸ, ԵԹԷ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՆԸ ԶԵՐԵՔԻՐ ԲՆԱԻ ԱՇԽԱՐՀԻ ՎԵՐԱՅ

Ըստ կարի պիտի ջանամք նաև բացայայտել թէ ինչ վիճակ պիտի ունենայինք մենք այսօր, եթէ քրիստոնէութիւնը չերեւէր աշխարհի վրայ, որով պիտի ուսանինք ըստ արժանւոյն յարգել մեր առ սոյն աստուածային կրօնն ունեցած պարտաւորութիւնը։

Օգոստոս կայսրն մեղք և անօրինութեամբ հասաւ կայսերական իշխանութեան, եւ կառավարեց դիմակաւ առաքինութեան. նա բըռնակալի մը յաջորդած լինելով՝ կամեցաւ զինքն անկէ տարբերելու համար հանդիսաւ թողուլ իւր հպատակները, եթէ չէր կարող լինել մեծանձն որ, կը փափաքեր գէթ լինել երջանիկ իշխան։ Ան հանգստութիւն շնորհեց նա իւր հպատակաց. ժողովրդեան մէջ սիրած վերջին աստիճանի ապահանութիւնն սկսաւ նուազիլ. այս հանդարտութիւնը երջանկութիւնեցաւ։

Օգոստոս գիտցաւ լաւ՝ի կիր արկանել ժամանակն. սա այն անձն է, որ բազդին պատրաստածները քաղեց և հաւաքեց. սա միշտ բարերաղդութեան հետամտեցաւ, բայց չկարաց միշտ խրատցնել զայն։

Տիբերիոս, յայտ յանդիման սասպիկ անարգեց մարդիկներն։ Այսպա՛ զատ համարած զգաստութիւն այն եղաւ, որոյ մէջ ինքն իսկ պարտաւորեցաւ թաքչիլ. բայց այս գոգցես ուրախութեան աղաղակ մ՚էր, զոր կարաց նա թաքուցանել, թէ և ժողովուրդն ու ծերակոյտը իւր սրտին բնական եղղ վատթարութեան մէջ ընկղմած էր։

Երբ սոյն արքայական ժողովուրդն խոնարհելով Կլօտին առջեւ, սկսաւ մեծարել զայն, իմացուեցաւ. որ իւր նորա տուած պատիւն զգուշութեամբ և չափով էր։ Հռովմ. սիրեց Ներոն, բայց սորա մահուանէն երկար ժամանակ յետոյ իւր ուրուականն գոգցես ահ և սարսափ կ՚ազդէր սոյն յուսոյ և ուրախութեան երկրին վերայ։ Ահա այսպէս կանգ պէտք է առնուլ, հռովմէական բարուց նկարագիրն դիտելու համար։ Այս բարուց հիմնա՛կ Տիտոս, ա՛կ Ներոնիոս և ա՛կ Մարկոս — Ա՛րեւելեան կարացին փոփոխել. սա միմիայն Աստուծոյ գործ էր։ —

Հռովմէական ժողովրդի բարուց ապահանութիւնն այլ եւս վերջին աստիճանի հասած էր, այնպէս որ կարելի չէ մարդոյ մի անկից աւելի վատթարանալ՝ եթէ արդէն սրտի նեղքին պահաստութիւն մը չունենայ։ Այսպէս կանեաւն Աթիկոս երբեք չընողացաւ. գերութեան շղթաներուն մէջ անգամ նորա խորհած ու որոնածն էր միմիայն զուարճութիւն։ Այնպէս կը կարծէր նա, որ իւր յաղթականներն զինքն կաղապատած չէին բնաւ. վասն

ալ նաքա իրեն Թագած էին Ալ-ափի տաճարն, այսինքն գրականութիւնն ու գեղարուեստները։

Հռոմ առաքինութիւն համարած էր բնութեան դէմ եղած ցած և անարգ գործերն։ Պրիւթոս Ք. խողխողեց իւր որդիքն, և Պրիւթոս Բ. ի մահ մատնեց իւր հայրն։ Կան ժամանակի պարագայից ստիպուելն յառաջ եկած առաքինութիւններ, որք ընդհանուր առաքինութեանց հետ դիւրաւ կը շփոթին. բայց պէտք է գիտնալ որ այսպիսիք տեղական առաքինութեանց արդիւնքներ են։ Թէ պէտ ազատ Հռոմ յառաջագոյն ստրկաւետ էր և ժուժկալ, այլ սակայն ստոր առիթ եղած էր իւր խեղճութիւնն ու աղքատութիւնը. քաջասիրտ էր նա, վասն զի իւր օրէնքներն կը տոհմիկին զինք առնուլ այլոց դէմ, մանաւանդ թէ ինքն յառաջ եկած էր հուդհահար և պատերազմասէր անձերէ։ Սակայն նա այնուհետեւ հպարտ, անիրաւ, ագահ և շուայտաբարոյ եղաւ. նա իւր բազդէն զատ ուրիշ գեղեցկութիւն չունեցաւ, իւր բարուց ընթացքն ատելի էր ամենուն։

Տան հրամանատարները ոտքի տակ առին զնա։ Մարիոս ըստ հաճոյից՝ աղնուականաց, իսկ Սիլան հարարակ ժողովրդեան արիւններն կը հասեցնեն, և ի լուծն անարգանաց սոյն վերջինը հրապարակաւ կը ջնջէ տոհմապետուն։ Կատիլինայի գաւաճաններն յանձնառու կը լինին իւրեանց հարազատ հայրերն սպանելու և խաղ մը կը համարին իրենց տապալել Հռոմայ մեծափառութիւնը, զոր Յուգուրթան կը ցանկար գնով առնել։ Այս կը գան եռապետներն հետերնին ունենալով իրենց հարատեւ օրութեան ոգին։ Օրատոս հրամայ կը տայ հօր և որդւոյ՝ զիրար սպանանել. և նաքա գոգցես անյագաղ հրամանը կը կատարեն։ Ներակոյան արհամարհելի կը լինի նոյն իսկ Տիբերիոսին պատճառաւ։ Ներոն՝ իբրեւ ստուած տաճարներ կ'ունենայ։ Ուռանց՝ առաջնակարգ համարուած ազնուականաց ընտանիքներէն յառաջ եկած քաւներու վերայ խօսելու, առանց զիրար ամբաստանող և սատակող նենգապետները մատնանիշ առնելու, առանց՝ Ներոնի վատութեանց մատնակցող բարոյախօս փիլիսոփաներն ի տես բերելու, օրինակի համար, Սենական՝ որ կը ջանայ մայրասպան Ներոնը քաջագովել և Պիւռոս, որ առ երեսս կը գովէ զայն, այլ ի ծածուկ կողայ նորա սոյն գործողութեան ձեռնամուխ լինելն. վերջապէս առանց որոնելու Կալիգուլա, Վիթելլիոս, Տոմիթիենի և Կոմոդի իշխանութեանց ներքեւ սոյն վատութեանց արձանագրերն, որք հարիւրաւոր անգամ վերընթերցուած և զարմանաց առիթ տուած են, նկարագիր մի միայն բաւական է մեզ՝ Հռոմէական բարուց ապականութեն տատիճանն յայտ յանգիման ցուցանելու։ Պղատիէն՝ Սեւերոսի պաշտօնատարն, իւր դուստրը կայսեր անգրանիկ որդւոյն հետ ամուսնացնելով, հարիւր ազատ Հռոմայեցիներ ներքինացոյց, յորոց ոմանք ընտանեաց տեր և հայր էին. « Որպէս զի, կ'ասէ պատմագիրն, իւր դուստրն բազմաթիւ ներքինիներ ունենայ իւր եաեւէն՝ ինչպէս վայել է արեւելեան թագուհւոյ մի »։

Ահա այս տատիճան վատթարութեան վերայ պէտք է յաւելուլ միանգամայն և յոյժ եղծեալ բարոյախնութիւն։ Անծարոյ կատանը՝ իւր ներկայութեամբ փղերայ չատուածոյն լկտի հանդեսներն կը պատուէր։ Սա

իւր Աթթիա ամուսինն յղի ատենները Օլիմպոսին Թաղուց գայն. բայց սակաւ ժամանակէն յետոյ երբ Օլիմպոս վախճանելով Աթթիա ժառանգ եղաւ անոր բոլոր հարստութեանց, վերստին կատաղ ամուսնացաւ նորա հետ՝ վնաս Օլիմպոսի որդւոյն։ Կիկերոն արձակեց իւր Փոպիլիայեին հետ ամուսնացնայ։ Անհնարին մեղ կը ներկայացնէ, որ կարելի այնպիսի կանայք, որք իւրեանց տարիքն փոխանակ հիւպատոսաց թուական հաշուելու. իրենց արանց թուական կը հաշուէին [1]։ Տիբերիոս հնազանդեց Scellarii և Spintriœ. Կերան ազատութիւնը Պիւթագորասին հետ հրապարակաւ խոստովանութիւն գործեց, և Հիլիոգաբալն իւր հարսանեաց հանդեսներն Հիերոքլէսով շքեղացոյց [2]։

Այս քանիցս յիշուած Կերոնն էր գարձեալ, որ հաստատեց էրիփաստրոյ (Juvénale) հանդէսներն [3]։ Ազգատոհմներն, ծերակոյտի անդամներն և առաջնին դասու կանայք պարտաւորուած էին ելանել Թատրոնի ասպարէզն և լսել ոմի երգեր երգելով՝ այնպիսակատակ գուսանութեանց նման խաղեր յօրինել։ Ի պատիւ Միմիկլէնի տրուած խնճոյից համար յատկապէս շէնքեր հիմ նուած էին Ագրիպպա ընակի ափանց վրայ, ուր Հռովմէական երեւելիք դէմ առ դէմ կը նստէին՝ բոլորովին մերկացեալ լիուլի կանանց հետ։ Իսկ դիշեր ատեն յատուկ լուսատուք Թիւններ կընէին, որպէս զի շնայատական գործքերն ու անառակութիւնը յայտնի տեսնուին։

Անհն եւս սոյն հինօրեայ ըստ նայ մի գլխաւոր Թատրն կը կազմէր։ Ան՝ որ մի կողմէն իւր սոսկումնեբով տխրութիւն կ'առթէր ոմանց, կը ներկայանար անդ սոյն կենդանական զբաղմունքներուն առաւելութիւն մը տալու համար։ Խնճոյից առելի պայծառութիւն տալու համար, բերել կը տային առաջնակարգ ըմբիշներ և անառակ կիներ փողահարներով շքեղապատած. այս պղծալից Թատերէն զինի կ'երթային հանդիսատես լինել կատաղի գազանի մը մարդկային արիւն խմելուն, և անկէց վերջն ալ կը ներկանային մի ուրիշ Թատեր, ուր հանդիսականաց զբաղմունքն հանդիսականաց կատարուած խաղն էր՝ հոգեվար մարդկանց կենաց վերջին վայրկենին ըղած տարաբեղի շարժմունքներն ու ըղձատաշարժ Թաւալումներն։ Ո՞նչափ ժողովրդ, որ մարդկային ծնունդն ու մահն անգամ նախատանաց կենդարիկ և բնութեան երկու մեծամեծ խորհուրդներն Թէատրոնի ատեանն կը հանէ, որպէս զի վիանդամէն նախատեն Աստուծոյ ամեն գործերն։

Երկրպագ գերիներն հանապազ շղթայ կը կրեին ոտքերնին, և իրենց ազատուտի համար տրուած ճաշերնին էին՝ սակաւ ինչ հաց, ջուր և աղ։ Իսկ գիշեր ժամանակ կ'արգելուէին տարերկրեայ մուռանի մը մէջ, որ մի միայն կամարին վերայ եղած փոքրիկ ծակէ մը օդ կ'առնէր։ Հռովմէական Թատերայ համար յատկապէս պահպանուող Վերկինեցի առիւծուց վնասներն կամ ապահանելը յատուկ օրէնքով մը արգիլուած էր։ Եթէ գեղացի մը իւր կեանքն ազատելու համար

(1) Հռովմայեցւոց մէջ ազգութիւն կը տային անգամ մի հիւպատոս փոխել. այս խօսքով հեղինակն կ'ուզէ հասկցնել, որ կանայք առն տարի իրենց տարեն կը փոխէին։

(2) Հիերոքլես Յոյն գերի մ' էր։

(3) Ս. յս հանդեսներն կը կատարուէին վեցերորդ ամսոյն մէջ. իբրեւ բաբելկնդանի դիմակաւորեալ հանդիսներ, որոց միայն երիտասարդներն կը մասնակցեին։

Ս. Թ.

յանդգներ մաքառել սոյն կենդանեայ միջոյն դէմ, խստիւ պատժոյ կ'ենթարկուէր : Այնքանպէս վայրենութիւնն այն աստիճանի հասած էր, որ եթէ մէկը ճամբու վրայ յուշակ մը պատառուելով կամ եղջերուի մը եղջիւրները վրան վերաբերելով՝ մեռնէր, իսկոյն ղանազան հիւանդներ վրան հասնելով անոր արիւնով կը լուացուէին և անոյշացուէին կը խմէին անկէ : Կալդուեան կը մտքէր, որ Հռովմէական ժողովրդին մի և նոյն գլուխ ուներ, որպէս զի կարենար մէկ հարուածով զամենքն ի մահ մատնել : Սոյն այս կայսրն՝ կրկնակի խաղուց համար պահուած առիւծներն մարդոց մսով կը կերակրէր : Ներոն սկսած էր մինչև անգամ կենդանի մարդկանց մարմիններն կերցընել Եգիպտացիի մը, որ իւր գիշակերութեամբ ու որկրամոլութեամբն խիստ անուանի եղած էր : Տիտոս՝ իւր Վեսպասիանոս հօր տօնախմբութիւնն փառաւորելու համար, երեք հազար հրէաներ գաղաններու լափել տուաւ : Երբ Տիբերիոսը կը յորդորէին որ դէմ ալ մահուան վճիռ տայ իւր բարեկամներէն միոյն, զոր բանտերու մէջ գրեթէ բոլորովին մաշեցուցած էր. "Ես տակաւին հաշտուած չեմ նորա հետ", պատասխանեց սոյն բռնակալն, այնպիսի խօսքով մի, որ իսկապես կը յայտնէ Հռովմէական ոգին — :

Գրեթէ հասարակ բան մի եղած էր նոցա մէջ սպանանել մի անդամն հինգ, վեց, տասը և մինչեւ քսան հասար հոգի ամեն կարգէ, ամեն ազգէ և ամեն հասակէ, որք բաւական էր եթէ կասկածաւոր լինէին կառավարութեան առջեւ. իսկ այս զոհուածներու ազգականներն՝ իրենց տուները տերեւազարդ ճիւղերով զարդարելով, կուռց ձեռքերն կը համբուրբերին և այսպէս սոյն հանդիսից ներկայ կը լինէին : Մեծանի բնութեան դաւաճանը որ չէր կամէր կատարել այս սարսափելի գործը, կը հարցանէր թէ՝ արդեօք զինքն սիրոյ հարուածե՞ն երբ բանտ տանին. նախ լկեցաւ զահիճէն և ապա նորա ձեռքով սպանուեցաւ : Այնպան էր Հռովմայեցւոց իրենց կրծնից տուած մեծարանքն : Կլօտի իշխանութեան ժամանակ (Տակիտոս կը ներկայացնէ զայս իբրեւ մի դեղեցիկ Թատր) Յուսէն լմակի ա. փանց վերայ 19 հազար հոգի մենամարտելով զնրար սպանեցին Հռովմէական ժողովրդեան զուարճութեան ու զբօսանացը համար. կռուելէն յառաջ մարտիկներն ողջունեցին զկայսրն ասելով "Կայսր, մահուան մերձ մարդիկ զքեզ կ'ողջունեն". խօսք մը, արդարեւ այնչափ մեղմ, որչափ ազդու :

(Շարունակելի)

ՀՈՎՈՒԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Բարեմասնութիւններէ և գեղեցիկ յատկութիւններէ զուրկ անձինք ընդհանրապէս իրենց մէջ չարանախանձոտի մը կը մնուցանեն. ուստի երբ կը տեսնեն իրենցմէ աւելի արդիւնաւոր և օգտակար անդամներ մարդկութիւն, կը սկսին անարդ միջոցներով հալածել և կամ յաւտահատեցնելու աշխատիլ և նոցա բարի անունը կամ համբաւը աղարտելու ջանալ : Այս օրինակ վատասիրտ անձինք ի սկզբանէ անտի մեր Ազգին մէջ անպակաս եղած են և կրնայ ըսուիլ է ասել, որ մեր՝ ուրիշ ազգաց նկատմամբ յետ ծնելուն ամենամնծ պատճառներուն մին եւս այս է :

Մովսէս Խորենացին, այս անզուգական անձը, որ մեր Ազգին անունը անմահացուցած է աշխարհի առջեւ, չարաչիրտ և օտարամոլ անձանց կողմանէ ուշ միայն՝ ի կենդանութեան շարունակ տառապած է, այլ յետ մահուան իւր ոսկորաթիքը գերեզմանէն հանուելով նոցա ձեռամբ ջուրը թափուած են։ Ղազար Փարպեցին, որ էջմիածնի նիւթական վիճակը լացնելէն զկնի, կը սկսի բարոյական բարեկարգութիւն զբաղիլ, վանքի տգէտ միաբանից չար նախանձը կը շարժէ իւր վերայ, որք կը սկսին պախարակել Ղազարոս ուշ միայն գիտութիւնը, այլ և հաւատոյ վարդապետութիւնը և՝ ի վերջոյ կը յաջողին որատաքսել վանքէն յափշտակելով իւր քով ունեցած Յունարէն և այլ գրքերն։

Ա յսպիսի օտարամոլ և նենգամիտ անձինք այսօր եւս մեր մէջ անպակաս են, որք իրենց համար բան ու գործ ըրած են Ազգի լուսաւորութիւն և յառաջադիմութեան նուիրեալ անձինքն հալածել իրենց գրչի ջաղացին հարուածներով և նոցա գիտութիւնը և հաւատը կասկածելի ցուցնել յաչս հասարակութեան. թէ և մեք աներկիւղ ենք, որ հասարակութիւն ողջամիտ մասը նոցա վերայ կը ծիծաղի։ Ա յս կարգի անձանց մէկ տարածուած էր, այն սուտ համբաւը, զոր Ազգ. լրագրերէն իմացանք թէ՝ Ս. Աթոռոյս Միաբան Արժ. Մեկքիսեդեկ վարդապետը Գերմանիա գնացած է Աստուածաբանութիւն ուսանելու համար։ Թէպէտ և մեք այդ հնացեալ և փտուած դրուխներուն պէս ուշ Գերմանիոյ անունէն և ոչ նոքա Աստուածաբանութենէն կը խրտչինք, այլ սակայն կը փութամք ասել, որ այդ համբաւը սուտ է և չարամիտ տաբոր հնարուած։

Ա յո՛ խորամանկ օտութեան հեղինակներն՝ երէկ ամաչելու երես և զգալու սիրտ ունին, կարդալով պատուական Մաթիւ 1480 և 1481 թիւ թերթերուն մէջ Պուքրեշէն և Ֆոտշանէն ղրկուած նամակներն, որոց մէջ ըսուած է բնչմը համար գնացեր է և նկարագրուած է թէ՝ նորա այցելութիւնը ի՛նչ բարոյական օգուտներ ունեցած է և պիտի ունենայ Մոլտո–Վալաքիոյ ժողովրդեան համար, անշուշտ պիտի ամաչեն իրենց յերիւրած օտութեան վերայ։

Թողուլ այս ամենը մի կողմ, կ'աւելենք այդ անձանց (աւելի ճիշդ է ասել կը գուժենք) թէ՝ Արժ. Մուրատեանցը շատ յառաջ ուսած է Աստուածաբանութիւն ուշ՝ ի Հռոմ, կամ՝ ի Գերմանիա, այլ մեր ամենասիրելի մեր Հայաստանեայց Եկեղեցւոյ անարատ ծոցին մէջ և սրտին Ս. Աթոռոյս ժառան. Վարժարանին մէջ "Հովուական Աստուածաբանութեան" դաս կը տար ինքնին դաս առ դաս աշակերտասիրելով։ Թերեւս ցարդ չօգուտ ընդհանուր Ազգին յիշեալ մեծ և աննախարեւոր աշխատութիւնը ի լոյս ընծայուած լինէր, եթէ դժբաղդաբար մի չընդհատէր այդ աշխատութիւնը ամբողջ ութն ամիս նորին Հայրութիւնը անկողնոյ ծառայեցնելով։ Սակայն կը յուսամք յԱստուած, որ երբ Արժ. Մուրատեանցը կը վերադառնայ իւր այցելութենէն, կ'ամբողջացնէ սկսած մեծ գործը և կը նորոգէ Ազգին՝ ի փառս և՝ ի պատիւ Սուրբ Աթոռոյս, ի պայծառութիւն Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ, ի յառաջադիմութիւն Հայ–Եկեղեցականութեան և յօգուտ բոլոր ազգին։

Որպէս զի մեր ասածներին շատերուն, մանաւանդ վերոյիշեալ սուտ հեղինակներուն համար

անհիմն ենթադրութիւններ չը համարուին, կարեւոր կը դառնայ Աբժ. Մկըրտեան վարդապետի ըստ մասնաւոր աշխատասիրութեան «Հայկազեան Աստուածաբանութիւնն» հետեւեալ հատուածը ընթերցողաց հաղորդել։

ԱՐԺԱՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԷՈՒԹԵԱՆ

Եկեղեցական պաշտօնի մեծութիւնը և գերազանցութիւնը կը ծագի և կ'երեւի — նախ՝ իւր քարոզած վարդապետութեան գերազանցութենէն, որ է «Իմաստութիւն խօսիմ ընդ կատարեալս». Ա. Կորն. Բ. 6։ Այսինքն այնպիսի իմաստութիւն, որ զմարդիկ այնքան կատարեալ կ'առնէ, որչափ կարող են լինել, ոչ թէ հարեւանցի կերպով, ոչ թէ առերեւոյթս, ոչ թէ ճշմարտութեան մի մասն միայն ուսուցանելով, այլ համայն ճշմարտութիւնն, համայն կատարելութիւնն։ Այս պաշտօնէն մեծ պաշտօն չը կայ։ Եթէ մէկը՝ որ և իցէ առարկայի կամ նիւթի վրայ անսխալ ճանաչողութիւն կամ ճշմարտութիւն ունի, արդէն մեծ մարդ կը համարուի։ Յիսուս Քրիստոս, Պիղատոսի առջեւ, թագաւորութիւնը և ճշմարտութիւն վկայելն իրարու հետ կը զոդէ։ Արդ՝ պաշտօնեի քարոզածն եւս պէտք է լինի ճշմարտութիւն, պէտք է լինի այն ճշմարտութիւնը, որ գերագոյն է, այն ճշմարտութիւնը, որով կեանքը կը բացատրուի և կը կառավարուի, այն ճշմարտութիւնը, որով կ'ապահովուի Աստուծոյ և մարդոյ, Արարչին և արարածոյն յարաբերութիւնը։ Այս ճշմարտութիւնը քարոզելէն աւելի ինչ մեծ գործ կարող է լինել։ Եւ ահա այս քարոզութիւնն իսկ հոգւոյ պաշտօնն է։

Երկրորդ՝ պաշտօնի մեծութիւնը կ'երեւի այս տեղէն, որ հոգւոյ քարոզած վարդապետութիւնը Աստուծոյ յայտնութիւնն է։ Նորան հաւատացուած են պատգամները, այսինքն այն բաները՝ «Զոր ակն ոչ ետես եւ ունկն ոչ լուաւ և՛ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց». Ա. Կորն. Բ. 9։ Պաշտօնեայն է ուրեմն Աստուծոյ անընդմիջական պատգամաբերն. «Որ ընդունի զձեզ, զիս ընդունի, և որ զիս ընդունի, ընդունի զառաքիչն իմ». Մատթ. ժ. 40։

Երրորդ՝ կ'երեւի այն կէտէն՝ որ պաշտօնեայն է գործակից ընդ Աստուծոյ։ «Զի Աստուծոյ գործակից եմք. . . . Եթէ ուրուք գործն, զոր վճռեաց կացոյց, վարձս առցէ, և եթէ ուրուք գործն այլեւայլ՝ տուժեսցի, բայց ինքն կեսցէ, այլ այնպէս որպէս թէ՝ ի հնոցս». Ա. Կորն. Գ. 15։ Պաշտօնեայն գործակից է Աստուծոյ, որ հաճելեաւ համարուած լինել նորա հետ, կամ համերաշխաւոր լինել նորա հետ և խոստացաւ աշխատիլ նորա համար և նորա ձեռամբ։

Չորրորդ՝ գերազանց է այն պաշտօնը, որովհետեւ հոգիը կը քարոզէ, կ'աւետէ և կ'ընծայէ փրկութիւնը։ Եթէ այս պաշտօնը դատաստարութենէ պաշտօն լինէր և հոգիը՝ Աստուծոյ կողմէն միայն նորա օրէնքը քարոզէր, նա պիտի կատարէր այն պարտքը թախծութեամբ և ստիմամբ. եւ սակայն այս պարտաւորութիւնը դարձեալ գերազանց պիտի լինէր։ Բայց որովհետեւ Աստուած իրեն փառք համարեց նեղելն, նա այն ներողութեան պաշտօնի մէջ եւս փառք դրաւ, այսինքն փառաւորեց հոգւոյ պաշտօնը։ Այս պատ-

ձառաւ ահա՝ Ս. Պօղոս սէ միայն երկու տեսակ պաշտօնէութեանց, այլ եւ երկու պաշտօնեաներու վրայ խօսելով՝ կ'ասէ. «Որ եւ բաւականս արար զմեզ պաշտօնեայս նորոյ Կտակարանացն՝ ոչ գրով, այլ եւ Հոգւով. զի գիրն սպանանէ, այլ Հոգին կեցուցանէ։ Զի եթէ պաշտօն մահու գրով դրօշմեալ՝ ի տախտական քարեղէն՝ եղեւ փառաւք, զի մի կարասցեն Հայել որդիքն Իսրայէլի երեսանս Մովսէսի՝ վասն փառաց երեսաց նորա, որ խափանելոյն էր. որչափ եւս առաւել պաշտօն Հոգւոյն եղիցի փառաւք։ Զի եթէ պաշտօն դատապարտութեան փառաւք էր, որչափ եւս առաւել պաշտօն արդարութեան փառաւք։ Քանզի ոչ եթէ փառաւորի փառաւորեալն յայս մասին՝ վասն առաւելութեան փառացն»։ (Ա. յոյնքն առաջնոյն փառաւորութիւնը երկրորդին առաւելութեան մօտ անփառաւոր է)։ Բ. Կոր. Գ. 6—10. բայց յայսմանէ յայտնի է, որ ինչպէս Աստուծոյ ողորմածութիւն փառքը, որ երկու անբաժան իրաց մէջ է (այսինքն նոյն ողորմածութեան և պատուոյ արդարութեան) նոյնպէս եւ քրիստոնէական պաշտօնի փառքը երկու մեծ տարերքը՝ նոյն է կը կազմի, զորս իւր աչաց առջեւ ունէր Եսայի մարգարէն, երբ այս խօսքերը կ'արտասանէր, «Իբրեւ զի զեղիկ են՝ ի վերայ լերանց ոտք աւետարանչի համբաւոյն խաղաղութեան, իբրեւ աւետարանչի բարութեանց, զի լսելի արարիցէ փրկութիւն քո ասել Սիովն թէ՝ Թագաւորեսցէ Աստուած»։ Եսայի. ԾԲ. 7։

Այս երկու տարերքը կը պարունակին այն կարգադրութեան մէջ, զոր տուաւ Ջհուտա Առաքելոյ և յետ նոցա ամէն Քրիստոնեայ պաշտօնէից, որ է պյակիել և կապել։ Յիսուս Քրիստոս փրկարար պատուէրներ տալով իւր աշակերտներուն և Աւետարանի պաշտօնին մեծութիւնը ցոյց տալով՝ ասաց. «Ամէն ասեմ ձեզ, զոր կապիցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս, եւ զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս». Մտթ. ԺԸ. 18։ Պաշտօնեայն կարող է կապել արձակելով և արձակել կապելով։ Նա կը կապէ, երբ կը ջղձայէ խիղճը կատարեալ օրինաց (Աւետարանի) հետ ադամանդեայ շղթաներով և խորհրդաւոր կապերով։ Նա կ'արձակէ, երբ կը քակէ, կը խլէ դատապարտութեան օրէնքէն, հռչակելով քարձումն գերութեան և իմաղութիւն Աստուծոյ։ Կապել և արձակելն երկու բեւեռք են, որ միշտ իրարու կը համապատասխանեն։

Ձշմարիտ է՝ որ պաշտօնեայն հոգ մահուան է նայա համար, որոց համար չէ հոգ կենաց. վէմն որ գլուխ է անկեան, է միայնգամայն և վէմ գլորման եւ գայթակղութեան։ «Վէմն՝ զոր անարգեցին շինողքն նա եղեւ գլուխ անկեան և վէմ գլորման և վէմ գայթակղութեան». Ա. Պետ. Բ. 7. Ճշմարիտ է, որ ով կը լսէ և չը հաւատար նոյն վէմին, մեծ է նորա դատապարտութիւնը։ Վասն զի դատապարտութիւնը՝ չը հաւատալու անհրաժեշտ հետեւանքն է, բայց այսու երբէք չը նուազ զոր պաշտօնի գերազանցութիւնը։

Միտ բանիւ, կարող եմք մեր խօսքը ամփոփել և համառօտիւ ասել. որչափ գերազանց է Քրիստոնէութիւնը, այնչափ գերազանց է և հովուական պաշտօնը։ Նոյն պաշտօնին կը վերաբերին Քրիստոնէութեան բարիքները, զորս կը կրէ եւ կը շարունակէ։ Ուստի, երբ Քրիստոնէութեան գերազանցութիւնը հետ չափենք նաև պաշտօնի գերազանցութիւնը, այն ժամանակ կը հասկնանք լիովին հովուական պաշտօնի մեծութիւնը և կարեւորութիւնը։

Ա. Ո Ղ Ջ Ա Կ Ա Ն

(Շաբաթական Թիւն , տես 12 Թիւ 1873։)

Աստուած , մեր ամենաբարի Հայրը գիտած ու մարդասէր լինելուն սահմանած է որ իւր օրհնաց դէմ մեղանչողները մէկէն ի մէկ և կատարեալ չը պատուին . կամեցեր է , որ այս մարդկային մարմնոյ գեղեցիկ ու կատարեալ շինքը անմիջապէս չեղծանի խիստ պատուհասիւ , այլ ձեր զգուշութեան և դարձին համար կամաց կամաց փոքր հարուածներով կը զգուշացնէ և հետզհետէ ՝պատուհաս պատուհասի վերայ գալով կը ծանրանայ և ապա մահովը կեղծանի ինչպէս յառաջ ալ ըսած եմ։ Այսպէս ահա Աստուած անիսխսելի օրինք դրաւ բնութեան մէջ , որ դուք առաջին անգամ այն կրած թերթեւ հիւանդութիւններէն խրատուելով զգուշանաք . այն տկարութիւնները , տենդերը , գլխացաւները ախորժակ չունենալը , թուլութիւնն ու ծուլութիւնները ձեր տղայական անմեղ ու սիրուն ձայնին դառնալը , գործէ ձանձրանալն ու դժգոհութիւն կրելը , մելամաղձութիւնները , առանձնասիրութիւնները , գիշերային ակամայ գիհձութիւնները ո րովք առանց հաճոյից իսկ կը մաշիք , և այլն և այլն բոլոր ձեր կրից պատուհասներն են ։ Երբ այս ամենը մի առ մի կ'ըսկսին և կամաց կամաց իրարու հետեւէ կը շարունակեն ու կը սաստկանան , սոքա ամէնքն ալ ձեր կործանման նախընթաց նշաններն են , որք ձեր կենաց ապագայ աղէտը կը գուժեն ձեզ ։ Բայց դուք բնաւ բանի տեղ չէք դներ զանոնք . նոյն իսկ երբ այս հիւանդութիւնները կը կրէք , այն տեղերն ան դամ մի և նոյն մոլութեան կը հետեւիք , մի և նոյն կիրքերուն կը շաղկը գրգռէք ու յագեցնելու կ'աշխատիք , որպէս զի ձեր թշուառութիւնը փութացնէք ։

Վարպետ որմնադիրը խախուտ շէնքի մի առաջէն անցած տեղն երևցած նշաններէն կը գուշակէ նորա կործանումը եւ կ'առաջարկէ , որ շէնքը դարմանուի . եթէ տանուտէրը անհոգ մնայ , օր յաւուր շէնքին նշանները կը սաստկանան , և եթէ յառաջ թեթեւ թամիրով մը պիտի բաւականանար , յետոյ որչափ ուշացնէ այնչափ ալ նորոգութիւնը ծանր ու դժուար պիտի լինի . բայց եթէ բոլորովին անհոգ մը նայ , շէնքը կը կործանի և անհոգ տանտիրոջ չարաչար վնաս տալէ զատ՝ շատ անգամ այլոց եւս կը վնասէ ։

Այսպէս ալ նախախնամութիւնը սահմանած է , որ ձեր տպագայ մեծ մեծ վնասուց փոքրիկ նշաններն յառաջուց երեւին ձեր վերայ , որք պէտք են զձեզ սոսկացնել , որոց երեւոյթը կը յայտնեն ձեզ կրօնքը , խոստովանահայրերը , բժիշկները և ձեր հաւատարիմ բարեկամները . եթէ բժիշկներն ու խոստովանահայրերը լինչ և իցէ նկատումով կամ տգիտութեամբ չեն յայտներ ձեզ զանցառութիւն կ'ընեն և չեն զգուշացներ , նոքա իրենց կոչման դէմ կը մեղանչեն . եթէ դուք անկեղծ ու հաւատարիմ բարեկամ չունիք որ յայտնէ , սակայն ձեր երկնային ու բարերար կրօնքը ունիք , որ կը յայտնէ ձեզ թէ՝ " Մեղքին վարձքը մահ է , և հիւանդութիւնք հրաւիրակ են մահու ։

Կրօնքն անաչառ է , քրիստոնէութիւնը խիստ սիրուն և անկեղծ բարեկամ մի է , որուն խրատներն ու հրահանգները բովանդակ կեանք ու երջանկութիւն են , դուք պէտք է եռանդուն սիրով ուսանիք ձեր կրօնը և ի

պոյծ դնէք զայն ի մանկութենէ, որ պէս զի ձեր բոլոր հասակին մէջ կա տարեալ երջանկութիւն վայելէք։ Գուք ուրախութեամբ եւ անդադար բաշխանօք պէտք է ուսանիք ձեր սուրբ ու անհամեմատ կրօնը եւ նորա հրա մաններըը ու պատուէրները հաւատար մութեամբ ի գործ դնէք որպէս զի թէ գուք ազատ մնաք կործանութէ եւ թէ զայլս ազատէք։

Գուք մի կարծէք, որդեակք իմ, թէ ամանք բնաւ չեն վնասուիր. ան հնարին է որ չը վնասուին։ Կիրքերը կը գան ու կ'երթան, բայց առանց իւ րենց ապականիչ նշանը ձգելու չեն անցներ, թէպէտ եւ առաջին անգամ ները նոցա վնասներն զգալի չը լինին, այնու ամենայնիւ վնասը կայ եւ ձեր առաքութիւնն երթալէն վերջը կ'ըս կսի երեւիլ։

Եթէ մէկը կրից վնասներուն եր կար կը տակայ եւ երեւելի փոփոխու թիւն մի չզգար, այնպիսին պէտք է գիտնայ որ եթէ իւր կրից թեզա րութեան չանուար, եթէ ժուժկալու թիւն ունենար, հարկաւ նա այժմեան վայելած կեանքին աւելի առատ, աւե լի երկար, խաղաղ ու զուարթ կեանք մի պիտի վարէր եւ անվիշտ ու անխռով ծերութիւն մի նա եւ բնական հանգիստ մնհ մի պիտի ունենար ա ռանց երկար հիւանդութեան եւ տա ռապանաց։

Արդ՝ որովհետեւ չէ գուշացած, եւ իւր մարմնոյն կենաց, հոգւոյն եւ առաքինութեանն ու երջանկութեան յարգը չէ ճանչցած, որովհետեւ կր րտսած է իւր անուղղը, իւր արիւնը եւ ուժը, ուստի բնութեամբ արչալի առաջ ու հասատատուն կազմ ունե ցած լինի եւ արչալի երկար տակոյ, այնու ամենայնիւ Աստուծոյ բնու թեան օրինաց մէջ սահմանած եւ դը րած պատճառները պիտի կրէ, եթէ ոչ այսօր, անշուշտ վաղը, եթէ ոչ այս տարի, հարիւր եկող կամ միւս տա րին, վերջապէս պետս չը կրնայ չը լինիր։ Ասոնք պատուր երեւոյթներէ մի խա բուիք եւ մոլորելով փորձութեան մէջ անկանիք։ Մտածեցէք որ երկու հոգի օրը տասն դահեկան կը վատնեն, բայց մէկը հարիւր դահեկան ունի, իսկ միւս երկու հարիւր, չէ որ հարիւր դա հեկան ունեցողինը շատով պիտի հատնի, իսկ երկու հարիւր ունեցողին նը ուշ, բայց հարկաւ պիտի հատնի։

Ինչպէս վայտահատը մի եւ նոյն կա ցինով մի եւ նոյն զօրութեամբ եւ մի եւ նոյն հարուածով ծառ մի մէկ քառա ղէն կը կտրէ իսկ ուրիշ ծառ մի երկու ժամէն ալ չէ կարող կտրել. ծառ կայ որ հաստ եւ պինտ է, ծառ ալ կայ որ բարակ եւ կակուղ է. սակայն ոչխարի ալ հաստ եւ ամուր լինի, կայծինը ար չափ ալ բութ լինի, այնու ամենայնիւ կարծել էք ասել թէ ամեն մէկ հար ուած առանց վերջի եւ առանց նշանի կ'անցնի, — ոչ, — կարծել էք ասել թէ չարունակեալ հարուածները չեն կոչ ծանէր զայն. քանի լեցի, ինչ ալ լինի անշուշտ պիտի կտրծանի, անանկ ալ մարդուս մարմնոյ կազմը, ոմանք տոչ կուն են, և ոմանք տկար, անոր համար ոմանց վերայ չուտով զգալի կը լինի և ոմանց ուշ։

Կը յուսամ որ այն բացատրու թենէն և օրինակներէն կարող եղաք հասկանալ և մանաւանդ, որ մեր Թը ւած բոլոր հիւանդութիւնները ու նը չանները միօրինակ կերպով ամենուն վերայ մի և նոյն ժամանակ չեն տես նուիր. ոմանց վերայ մէկը կամ մէկ քանին կը տեսնուի, ոմանք քիչ ժա մանակի մէջ բոլորն ալ կը կրեն, իսկ այլք երկար տաեն մի միայն մէկ նշան մի կամ միատ մի կունենան. իրարան

չեւրին լրեն կազմին ու խառնուածոց համեմատ կը պատահի որ մին այս ինչ ներքին կամ արտաքին պատճառաւ կամ ցնդեան ու սերնդեան ինչ ինչ հանգամանքներով իւր մէկ կողմը զգերուն այս ինչ մասը կամ զգայարանքը տկար կը լինի. ահա այնպիսւոյն նոյն կողմը աւելի շատ և աւելի շատ կը մեռնուի. զոր օրինակ, ոմանց ծնկերը կը բռնուին, ոմանք ստամոքսի ցաւ կամ ճնշում կ'ունենան, որ երբեմն այնչափ կը զօրէ, մինչեւ ուշաթափ կ'ընէ զմարդ. ոմանք ականջի ցաւ և կամայ կամայ մինչեւ իսկ խլութիւն կ'ունենան, ոմանք աչքի ցաւ, կարճատեսութիւն եւ կաթարթիւն կ'ունենան, և այլն: Ուրեմն երբ կը տեսնէք որ յայտնի հեշտասէր մի այս ինչ կամ այն ինչ մեռաւ չէ կրած, զգուշ լայ որ երկբայիք, նա անշուշտ ուրիշ չարիք կրած է եւ կը կրէ, Թողուցնք այն ներքին վէրքերն ու ծանծաղ տառապանքները, որք չեն երեւիր, զորս ինքն միայն կը զգայ. բայց որպէս զի իւր սիրած կուռքէն չը բաժնուի, որպէս զի իւր պաշտած մոլութենէն չը զատուի, բնաւ չուզեր որ այն ցաւերն անկէ յառաջ եկած համարի. այս պատճառաւ բնդհանրապէս անուղղայ կը համարուին նոքա, որք իրենց յանցանքը յանցանք չեն համարիր և երբ ուրիշ չէն յանդիմանուիր, կ'ուզուրանան և արդարանալու կը ձգնին, կամ զղջայ յանցանքը ներկայացնելով իրենը խափանել կ'աշխատին, նաև նոքա, որք իրենց ուղղութեան համար իրատ կ'առնուն բայց չեն պահեր, առաջին յանցանքներն կը մոռանան և կիրքերնին կը յաղթէ իւրեանց օգտին, այս պիսիներն շատ անգամ կը գլորին և յաճախ կը մեղանչեն ըստ առածին թէ, "Սխալանքը մոռացողը կը սկսի նորէն սխալիլ": (Շարունակելի)

Տարեմուտին օրը հետեւեալ երկու ճառերն կարդացուեցան Յառաջադրաց կողմէն՝ ի նշան որդեխական եւ բախտադիտութեան, զորս ինքնալեքրութիւն շարադրողաց կը հրատարակեմք: Առաջինը Պատրիարքարանի մէջ կարդացուեցաւ, ուր երբ ըստ սովորութեան Թէ միաբանական Ընթրիքը և Թէ յառանգաւոր ստանուն զինի առաւօտեան ժամերգութեան դնացին ուխտաւորաց խռուն բազմութեամբ, իսկ երկրորդը վարժարանին մէջ, երբ Աւետ. Ս. Պատրիարքը հայրապարապ այդ եղաւ յառանգաւորաց, օրհնեց և քաջալերեց զանոնք ազգու խրատներով:

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ

ԵՒ ՎԱՍՊՄԱԲՈՂ ՈՒՆԿՆԴԻՐՔ

Այսօր մարդկային ազգի վրայ արտաքոյ կարգի եւ սովորականէն դուրս չարժուամ մը կը նշմարուի. այսօր ազգերը եւ համայն բնութիւնը նոր կեանք եւ նոր ոգի կընդունուն. տուընջեան լուսաւորը՝ արեգակը դաղտնս սովորականէն աւելի աճապարանաց մէջ կ'երեւի մեզ նոր օր աւետելու համար. վերջապէս մայրական եւ հայրական կոչումն ընդունող այն ոգ ձեռն ի ծնօտ ծանր մեռածման մէջ կ'երեւին, նոքա որք իրենց մայրական եւ հայրական պարտքերն ըստ ամենայնի կատարած են, այսինքն իրենց զաւակներն կրթած են, ուրախ եւ զուարթ են. եւ սուր հակառակ կը տեսնեմք խումբ մը մարդիկ եւս՝ որք ամեն հոդ եւ մտածմունք ի բաց թողուլ որպէս թէ այսօր իրենց կենաց ախիղճն է՝ ուրախութեամբ կը լայտան եւ կը պարեն, եւ դուարճութեամբ կը լեռկրին: Սակայն սոցա ամեն ուրախութիւնը միայն արտաքին է, սուրբ իրենց խղճի հարուածներէն միշտ կը տանջուին չարաչար. վասն զի ճշմարիտ ուրախութիւնը միմիայն պարտուց կատարման մէջ է եւ ոչ այլուր:

Այս ամենուն պատճառը յայտնի է, այն է՝ հին տարւոյն դաղտնութիւն, որով նորոյն յայտնութիւնը: Գոդցես այսօր որ 1873 ի վերջին եւ 1874 ի առաջին օրն է, ամեն մարդ, ազգ եւ աղինք, եւ ամեն տերութիւնք իրենց դործոց չարունակութիւնն թողուլով անցեալին վայ ակնարկ մի կը ձգեն, կը դիտեն եւ կը քննեն անցեալը Թէ արդեօք ինչպիս անցաւ,

արդեօք սպրիւնասուր եղաւ իրենց համար, թէ ապարդիւն. այս հարեւանցի ակնարկով մեկը կը տեսնէ, որ իրեն համար անցեալը ապարդիւն եւ անօգուտ եղած է. ուստի իբրեւ փորձառու կը խորհի ներկայն եւ ապագայն արդիւնաւոր առնել. ուրիշ մը կը տեսնէ, որ թէեւ անցեալը բոլորովին անպտուղ չէ ըլլացեր, այսու ամենայնիւ ալեւոր եղածին չափ չափ հաւէտ առնելու համար, նոր միջոցներ եւ նոր հնարքներ կը մտածէ. մեկ խօսքով երրորդ մի եւս հանդիստ խղճիս եւ ուրախ սրտիս կը տեսնէ որ ժամանակը, ընթացեան Աթոռին մարդոյն տուած աւանդը ըստ ամենայնի աւանդատուին կամաց համեմատ՝ դործ դրած է. ուստի սրտագին բարեմաղթութիւններ կ՚առաքէ առ Բարձրեալն, որ իրեն օրհնէց ժամանակի բարուքը կիրառութեան մէջ։

Աբէ՝ եթէ հարեւանցի ակնարկ մը այսչափ օգտաւէտ է, անշուշտ ներքինին տեսութիւն մը առաւել եւս օգտակար պիտի ըլլայ, հետեւաբար եւ կարեւոր. վասն զի տուր նկատողութեամբ պիտի տեսնենք, որ չատ մը ազգեր անցեալին մէջ ժամանակին հանճարոյն գործելով հակապատկառ յառաջադիմած են, իսկ չատերը ընդ հակառակն անկոյթ գտնուելով՝ ժամանակին արշաւից կատաղին անուաց տակ մնացած են, որով յետ մնացած են վոխանակ յառաջադիմութեան, պիտի ասենք, որ ամենք գլորած. ամենք գտած եւ ամենք կորուսած են. այս ամենը տեսնելով, անշուշտ ցաւալի վոյիւ գանուածներն ըղձասանալով պիտի ջանան հաւ մըն ինքնին լինել ժամանակին, որպէս զի նորա սպասիչ եւ սեւերէ հալածուոց տակ չընկճին։

Մի եւ նոյն տեսութեամբ, որ թէեւ իւր հատուկն եւ վիճակին անպատշաճ, բայց իբրեւ մարդոյ, իբրեւ Հայ — Աղգին յետին անդամի մը առաջին պարտաւորութիւնն է, կը դանեմ որ՝ 73ը մեր ազգին համար ո՛չ միայն անօգուտ եղած է, այլ եւ կարի վնասակար. վասն զի անմխիթարութեան չար ոգին, որ Հայ—Աղգին հոյակապ տունը կործանելու, որ Հայրապետաց լեռնութիւնն սկսեալ մինչեւ Կոստանդնուպոլսոյ Պատրիարքութիւնը ամէն բան կործանելց եւ վերջապէս, եւ Հայը ընդ ընդհատ աշխարհի փշուր նման ցրուելց. 73 ին դործակից սկսաւ իւր կործանիչ եւ ապականիչ դործերն. մնաւ չատ Հայ սրտերու մէջ, որոնցմով ամբողջ ազգի խաղաղութիւնը խռովից, չատ բարեվարուց մէջ խնդութեան պատճառ, ընտանեկան հարկաց մէջ սիրոյ անդորրութիւնը արհամարհած ըրաւ. նոյնպիսի եւ ուրիշ տնկերաւ, Աստուծոյ եկեղեցւոյն մէջ Հայը Հայուն դէմ դուրը ելից. եւ այլն, եւ այլն։

Անտարակոյս 73 թուականին այս քանիներն անոնք էին եւ դեպքերը ազգային պատմութեան մէջ անջնջելի եւ մղձաւանջ սեւ էջեր սիրոյ ղրաւէն, ուրան հանար չեմ կարծեր որ ապագայ սերունդը իրեն նախնեաց վերայ դովեստիւ խօսի. վասն զի ճշմարտութիւնը եւ ստութիւնը իրարմէ որոշելու համար չատ պիտի տաղնապի։

1873 թուականին կարծես թէ ամբողջ մեր ազգը հաղիւահօտալ նաւու սկսս ծփելցաւ. քանզի անմիաբանութեան մրրկայոյզ վոլորտիները ամենայն ինչ վեր՛ի վայր յուզելցին եւ ընկըմնլուս սասփռանին ըներին։ Թերեւս մեր այս տարօրինակ բայց ճշմարիտ խօսքերուն դէմ առարկողներ ըլլան որ, ինչպէս համար 1873 թուականը այդչափ տոհմալի եւ վնասակար կը նկարագրուի. մինէ չարժումը, յուզումն, ազգի մը կործանումէ կը պատճառուն— ճշմարիտ է որ ըսուած է, թէ չարժումը յառաջադիմութիւն է, սակայն պէտք է մտառել, որ յառաջ երթալուն ալ չարժում կըսուի, յետ յետ դնալուն ալ, եւ չեմ կրնար, որ այս երկու տեսակ չարժմանց անհնան տարբերութիւնը չը դիտցող մը ըլլայ. առաջին չարժմանը ժամանակին հանիթաց կը վնասէ մարդ, որով չատ ազգեր անհետ ըլլալու վրայ են։ Մեծամեծ բարեփոխութեանց հետեւ եւ այսօրուան հզօր, լուսաւորեալ, եւ բարեպատ տերութիւններն կը կազդուրանեն. իսկ երկրորդ չարժմանը է, որ մարդ ժամանակի աւերիչ ժանեակ կուր կըլլայ. եւ որով չատ հզօր եւ վիթխարի ազգեր եւ աշխարհատատան տերութիւններ անկան կործանեցան, որոց կամ միայն հետքը կը նշմարուի՛ պատմութեան, եւ կամ ջրաբաշխ բնակորնչեալ աշխարհի այս կամ այն անկիւնին մէջ։ 73ի մեր ազգի ըլած չարժումը վերջի տեսակէն էր։

Սակայն այս եւս անուրանալի է, որ այս յուզմանց եւ ազգակործան տաղնապներուն մէջ, կային այնպիսիներ եւս որք թէեւ թուով նուազ այլ գործով եւ արդեամբ նշանաւոր, որք ամենքին անմոռանալի գործոց երկնց ազգասիրութեան նպատակը յառաջ տանիլ ներտեղեան եւ ջանացին, կը ջանան եւ պիտի ջանան։ Յորոց եւ մին գուբ եմ Սրբազան Հայր, Հանդերձ Ս. Աթոռով, որ ամէն խոշնդոտ եւ արգելք առ ոչինչ համարելով առանց յուսահատելու ջերմ ազգասիրական գործքերը յաջող կը վարեցաւ՛ի տէր եւ՛ի չինութիւն Ազգի եւ Եկեղեցւոյ. եւ այս է հմարիտ ազգասիրին կոչումը. այսինքն, առանց վհատելոյ ջանալ որ յառաջադիմութեան եւ լուսաւորութեան խոչնդոտները չը կարողանան արդելիչ ինչ բան կանդնել, եւ երբեմն յաջողակ նաւարար յարմարել հոսանց ամէն տեսակ ընդունելութեանց, եւ ահա այս մանրն գեղեցիկ կ՚առնէ Սեբեկեայ իւր իմաստասիրական ճառերուն մէջ. ազ եւկաւար վատ է, յորոյ՛ի ձեռաց դեակն խլին ալիք, որ հաղիւիոտ լքանէ զառագաստն եւ՛ի հանգոյս մրրկին զառաստիայան ինդոյս. իսկ որ ձեռն դքեղծիւք եւ ընդ ալիս մրրկալով սառզանիցն՝ եւ՛ի նաւաբեկութեան անդ դոլիւք է »։

Սիրագան Հայր, հրամարտարար որդիդ, այս նշանաւոր աւուր մէջ չը կարենալով իրենց պատի եւ լսոխտական զեղուն զգացումներն թարգմանել Ձեր այնչափ բարերարութեանց, որ առ մեզ, եւ մեօք առ հասոյն Ազգն, խանարհաբար իրենց երախտագիտութիւնը եւ ուրախութիւնը կը յայտնեն, որ Ձեր ազգօգուտ կենաց չորքանչին մէկ սարին եւս բարեաւ եւ խաղաղութեամբ անցուցիք. բաց յատուկ երախտապարտ որդիդ, իրենց երախտագիտական եւ ուրախականն զգացմանց արտայայտութեան հետ ուրիշ նը՝ հերական պարտք մի եւս ունին կատարելիք, այն է՝ նորահաւաքելով Ձեզ նոր օրս՝ իրենց բաղկաց հետ պատերին եւս բարձրացնել առ Նախախնամն Աստուած, եւ բարեմաղթել խաղաղ չատ նոր տարի՝ ներ, նոյնպէս կար եւ կարողութիւն եւ յաջողութիւն Ձեր ամեն ազգասէն գործոց։

1874 Յունվար 1
Երուսաղէմ

Սարգիս Սեբաստիան
Թալասպի
Աշա. ժառ. վար.

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՍՐՈՒԶԱՆ ՀԱՑՐ
ԵՒ ԳԵՐԱՊԱՏԻՒ ՏԵԱՐՔ

Ի՞նչ հակապատիւր անառարանելի են, որ այսօր ամեն դիտողի կը ներկայանան. վասն զի կը տեսնեմք չատերն, որոց երեսաց վերայ ուրախութեան եւ ցնծութեան ժպիտ մի կը վազվզուի. կը տեսնեմք եւ զոմանս, որոց երեսաց վերայ տխուր թախծութիւն մի կը տիրէ. կը տեսնեմք զարմանալ չատերն, որոց անտիսական հասակը ազատամ թառամած եւ խրտնած վայրկեանները կորսուած եւ չարաչարութիւնը անցեալն կը վայնի, իսկ ընդհակառակն կը տեսնեմք եւ զայ մանայ ծերունի մը, որ իւր անցելոյն վերայ ափսոսալ մի ձգելով կը ժպտի որ թէեւ առաւերի նման անյոյս է, բայց ոչ ապարդիւն եւ անպտուղ։

Ինչ է պատճառը այս հակապատիւր երեւոյթներուն պատճառը։ Մասիլիոն, այս լուսաւոր հանճարը կսսէ, որ ամենայն բարերարդութիւնը եւ թշուառութիւնք կախումն ունին ժամանակին բարի եւ չար կիրառութիւնեն։ Մի գուցէ եւ այս աւուրս տարօրինակ երեւոյթներն, այն է ամենց ուրախութիւնը. ոմանց խաղաղ դէմքը եւ չատերուն յուզմունք տխուր հետեւանքն է։—Անտարակոյս, որովհետեւ դուս մի մարդիկ չը գիտնալով որ ծուլութիւնը եւ անգործութիւնը ամենայն թշուառութեան եւ աղքատութեան ծնող են, իրենց կենաց մէն մի անդիւտ վայրկեանները եւ անգին ժամերն ու օրերն անդառնալի վատնած եւ իրենց մտաւոր ու հոգեւոր կարողութիւններն կորսուած կը հառաչեն թէ, անցան մեր վայելուչ եւ մանկական օրերը երբեւ ամպոց հետքեր. անյայտացան, հալեցան նաւթա երբեւ ձեղեամ եւ ծածկեցան երբեւ նաւուց գնացից հետքեր, որ սրընթաց կ'ընթանայ հուտալ ջուրց վրայէն հերձելով Ովկիանոս լեռնակուտակ ալիքները։ Այս թշուառ ապրուածներն իրենց անհոգութեամբ՝ ի զուր անցնելով իրենց օրերը նոր կղզան ժամանակի թանկագինը եւ նորա անգնահատելի լինելը եւ կը դիզեն վիրկիլեան նեազը «Ո՛, զիմիդ, վայելուչ աւուրք տիոց, հեզ մահաց ուաց փախեան վաղվաղ». նոր կղզան, որ սչխատութիւնը ամեն բանէ աւելի քաղցրագոյն է եւ մանաւանդ կազդուրիչ եւ միանգամայն միակ պարտաւորութիւն մարդոյ տուեալ Աստուծոյ. այսօր կղզան թէ որչափ հետացեր են երջանկութենէ ճանապարհէն եւ ունայն յոյսերու մէջ մաշեր են իրենց կեանքը. վերջապէս նոր կղզան որ իրենք են պատճառ իրենց կենաց երջանկութեան եւ բարեվարութեան, եւ միանգամայն թշուառութեան եւ պերջանկութեան. այլ անօգուտ զղջումմ եւ զուր ապաշաւանք. զի գնաց եւ սահեցաւ ժամանակը իրեւ զառուեր, սահեցաւ եւ հոսեցաւ արագութեամբ զոհասնս գետոց եւ խորասուզեցաւ յաւիտենական գիշերոյ ծոցը եւ ոչ եւս պիտի վերադառնայ։ Այս կրնաստղ մարդկանց համար մեծ ու անդարմանելի է, ուստի եւ ամենամեծ չարչարութիւն, ինչպէս կսսէ Ցրանքլին. «Շռայլութեան ամենէն մեծը ժամանակի կորուստն է. վասն զի անցեալ ժամանակը չը վերադառնար, եւ երկայն կարծած ժամանակներս ալ մեզ համար խիստ կարճ են»։ եւ վասն այսորիկ հետեւութեան գործ մեծահանճար ոգիներէն մին զգալով ժամանակի այսչափ արագահասութիւնը եւ նորա թանկագինութիւնը աշխատական վճիռ հատած է ասելով, «ի կիր առնուլ պարտ է ժամանակն»։ որով հետեւ կանոնկ ժամանակը եւ չէն կատարուիր մեր գործերն, թերակատար կը մնան մեր յոյսերն եւ մինչ կը կարծեմք թէ գործ մը պիտի տեսնեմք, ահա խլոյն զմեզ օրհասական վիճակին հասած կը տեսնեմք եւ կը զարհուրիմք. եղուկ եւ հաղար ափսոս նոցա, որք իրենց անգին ժամերն անգործութեամբ անցուցած են. եւ ահա այսպիսիներն այսօր գլուխ դնելու հայ կանչուլ կը հառաչեն։

Այս ամենուն հակառակ եւ կը տեսնեմք դուս մի մարդիկ, որք ժամանակը ի բարին կիր արկանելով գործօնեայ մշուսաց նման աշխատած են զգալով ժամանակին յարգը եւ թանկութիւնը, այժմ կուբասանան եւ կը ցնծան. եւ ահա այսպիսեաց ուրախութիւնը եւ ցնծութիւնը իրաւան եւ տեւական է։

Սրբազան Հայր եւ Գեր. Տէր։ Ք, մինչեւ ցայս վայր լաւ իմ տկար կարողութեանս, Ձեռագրել զմարդկան ազգի երջանկութիւնը, բարեբաստութիւնը, թշուառութիւնը եւ ապերջանկութիւնը կամ ըստ մնոնէ ունին ժամանակի բարի եւ չար կիրառութենէն. այն ազգը որ ժամանակը ի չարն գործադրած է, միշտ վշտացեր է. այս ճշմարտութիւնը կը հաստատէ տիեզերական պատմութիւնը. ուր են Հռովմայեցւոց, Կարքեդոնացւոց, Ասորեստանեայց, Եգիպտացւոց եւ Բաբելացւոց երկրատասան տերութիւնք, որք ժամանակաւ ամբողջ երկիրը կը տասանեցնէին. իսկ այսօր նոցա աղօտ յիշատակներն հազիւ կը նշմարին պատմութեան մէջ. Նոցա ազետալի կործանման եւ կորստեան պատճառը ժամանակի չար կիրառութիւնն է. այս բանը մեր Ազգային պատմութիւնն եւս կը հաստատէ, ուր են Հայկազանց հզօր եւ աշխարհակալ թագաւորներն. ուր է նոցա ընդարձակ երկիրը. ուր Արշակունեաց թագաւորութիւնը, ուր Բագրատունեաց եւ Ռուբինեաց հարստութիւնքն, այս ամենքն ժամանակի անաչառ հարուածոց տակ ընկան եւ ոչնչացան. այս ամենայն անհետ եղան ժամանակի աչ լարեալ կիրառութեամբ, որով Հայաստանի ընակաւոր զաւակունք ընդ ակիւռս երկրի ցրուեցան, հեռի իրենց հայրենի երկրէն, օտար աստղի տակ, օտար կլիմայի մէջ իրենց ուժը եւ զօրութիւնը կորսուեն, փոխանակ զոյն իրենց հայրենեաց բարգաւաճման եւ իրենց մայրենի եկեղեցւոյ պայծառութեան համար նուիրելու։

Ձեմ ուզեր այս ուրախութեան աւուրս մէջ բոլորովին անդրէզն տխուր յիշատակօք զձեզ վշտացնել, չեմ ուզեր պղերգական մի պատմագիր կատարել. իմ պարտաւորութիւնս է ի պիտոյ ընկերացս երախտագիտութիւն եւ հնորհակալութիւն յայտնել. առ կայն զանի որ մեր Ազգի անցեալն մէջ ունեցած կրնաւանդն յիշելի, գոնէ ներկայիս մէջ տեսնուած միջմասական չարժառիւներն ալ ըստ համառօտակի։ Իրաւ է որ Հայ Ազգը ցիր եւ ցան եղած է. հշմարիտ է որ չատերն ոչ միայն իրենց հայրենի երկրէն գաղթած են, այլ եւ իրենց մայրենի եկեղեցիէն բաժանած եւ խորտ խորթացած. այլ սակայն կայ դեռ եւս մնացորդն մաս մը որ իւր Ազգութիւնը եւ Եկեղեցին սիրով պահած է, եւ իւր Եկեղեցւոյ անկախութեան եւ ինքնուրոյնութեան համար ամեն ջանք կ'ընէ. ուստի կը խոստանամ եւ համոզուած է որ հայրենասէր հայուն համար սիրոյ եւ միութեան միակ կերդումն է Եկեղեցին, միակ հայրենիք է Եկեղեցին. արդ քանի որ Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ զաւակունքը այս համոզումն ունին, ի գոր կը հետամտին ազգակուլ բռնաւորներն ջնջուելու նենգութեան դիմակաւ, Աստուածամի ուրբ անուան տակ Հայ—Ազգը եւ Եկեղեցին իմակարիլ. ատ-

ասիկ Հայ—Ազգութիւնը եւ Եկեղեցին տարի մը եւս անցուցին եւ տակաւին պիտի անցնին շատ տարիներ. Պէտք է խոստովանիմք որ այսօր մեր ազգին մէջ մեծ ուսումնասիրական եռանդ եւ յառաջադիմութեան չարժումն եւս կը տեսնուի. Հայաստանի տարագրեալ զաւակունք զգալով յառաջադիմութեան եւ լուսաւորութեան անբաւ օգուտներն՝ չարժման մէջ են, այս չարժումը շատ մխիթարական եւ յուսալի է Ս. Հայր եւ Գեր. Տէր, որովհետեւ չարժումը շատ անգամ հրաշքներ կը գործէ եւ աքանչելի արդասիքներ կ'արտադրէ. Հայ զաւակաց այս չարժումը, ասյացոյց մ' է որ իրենց սրտին մէջ տակաւին վառ է իրենց երջանկայիշատակ նախնեաց ուսումնասիրութեան, Աստուածասիրութեան եւ խոստութեան սուրբ ոգին, կը կրեն նոքա դեռ եւս իրենց ազգաչէն եւ եկեղեցաչէն հարց սուրբ եւ արիական ոգին. ո՛հ երբեմն թէ այս ասածներս երեւակայութիւն չը լինէին այլ իրականութիւն. սակայն ի՞նչ պէտք է երկարել. ահասասիկ մակ ապացոյց եք ասածներուս Դուք Ս. Հայր հանդերձ միաբանական Ռեհտիւդ, վասն զի քաջ ղգալով որ Հայ ազգին փրկութիւնը կրթութեան մէջ է, չը նայելով Ս. Աթոռոյս նիւթական անճոռնի վիճակին, ամեն զոհողութիւն յանձն առած եք Ազգին լինութեան եւ վերակենդանութեան համար. Ճշմարիտ ազգասիրութեամբ ի լինութիւն եկեղեցւոյ ժողոված եք զմեզ եւ մեր միտք ու հոգւոյ կրթութեան համար ամեն ջանք եւ աշխատութիւնս կընէք անդադար եւ նոյն իսկ չը նայելով որ ձեր խնամքով եւ ջրտանց արդիւնքով անոնցներն շատ անդամ ապաշնորհ կը դանուին. այս ամեն անհոգութիւնները բարեաց չունենք ժառանգաւոր առնուելու այլ ինչ, բայց միայն երախտագէտ սիրտ մը, ուր անջինջ քանդակուած է երախտագիտութեան սուրբ զգացումը առ համայն Միաբանութիւնդ, որով այսպիսի նշանաւոր աւուր մը մեզ նուիրական պարտք կը համարին իրենց խնդակցութիւնը յայտնել, որ Ս. Հայր սարի մը եւս անցուցիք, ազգ եւ առաջ հանդերձ Ս. Ռեհտիւդ. նոյնպէս չը պիտի մոռանամք այս աւուր մէջ մեր ամենօրեայ մաղթանքներն առաքել առ Ս. Հնհակալն, որ Ձեզ շատ նոր օրեր եւ տարիներ շնորհէ, որպէս զի Ձեր սկսած ազգային մեծ գործը եւս առաւել յառաջ տանելու ջանաք, որով փոխարէնը, եթէ ոչ յաւուր, անտարակոյս ի հանդերձեալումն կը հատուցանէ, որ պիտի ընդունիք յԱստուծոյ։

1874 Յունվար 1. Խոնարհաբար Սիմեոնեան Մեհենեցի.
Ս. Հ. Ս. Վ.

ՆԱՄԱԿ

Հետեւեալ նամակին այս տարուան բարեպաշտ ուխտաւորներէն Աբրահամ կեղցի մեծ . Սաղոմիելեան մահտեսի Կարապետ աղան առած է մեզ հրատարակելու խնդրանօք :

. . . խմբագրութիւն Սիմէի .

Ի սուրբ քաղաքս Ժամանելէն մի քանի օր յետոյ Օրագրոյ 1069 թիւ Թերթին մէջ Մասիս պատուական լրագրոյն 1410 թիւ Թերթով Աբրահամեան փիլիպպոս Գաբրիելեան ատրագրութեամբ գրուած նամակի մը իբր հերքումն՝ ատոգանիչ ատրագրութեամբ նամակ մը կարդացի , յորում նամակագիրը աշխատեր է զմեզ անարգել և անպատուել : Մեք այդ անարգանքն ու անպատուութիւնը սիրով կը ստանիմք Յիսուս Քրիստոսի հրամանակատար գլուխ նուելու համար , ներելով միանգամայն նամակագրին մեզ դէմ գործած յանցանքին ի նմին ատանձնաբուն դէմ ոչ բնչ բան չունիմք ասել . քանի որ ըստ ատրագրեալ նամակի մը դէմ անատրագիր նամակ մը հրատարակելով , իւր խոչքերն ինքը կրսատէ :

Ուստի Թոզալ նամակագիրը իւր խաչմանանայ , եթէ ունի , մինչ Օրագրոյ խմբագրին ուղած ծուռ տեղեկութիւնները համեմատ , ըրած ծուռ դատաստանին ուղղելը :

Օրագիրը կ'ասէ " Սաղոմիելեանը որով իրաւամբ անվճար և անուանական կտակի մը վրայօրէն կը յանդգնի վարժարանին վերայ իրեւ կտակատար (այսու *) անունը քանդակել , ա հա այս բոլոր արձակ անիրաւութիւն է . ուստի իրաւունքն այն է որ կամ Սաղոմիելեան իւր այդ կտակել ուզած , կամ դեռ ոչ կտակած դատարը նմանէ ուրիշ մէկուն յանձնէ իբրեւ կտակատար և կամ այդ անունը վար առնուի յիշեալ հինգին վրայէն և այլն և այլն :

Օրագրոյ մեծատատիւ խմբագիրը ֆէնամին ի հարկ է իւր առած տեղեկութիւնը համեմատ դատողութիւն ըրած և իրաւունքը այդ կերպ յայտնած է . բայց որովհետեւ անատրագիրը նամակագիրը սատելութեամբ գրեր է , ուստի կը պարտաւորիմք գործոյն իսկ ճշմարտութիւնը պատմել և իրնդրել Օրագրոյ խմբագրին՝ որ եթէ արդարութիւնը կը սիրէ , ճշմարիտ դատողութեամբ Թոզ այս անգամ եւս իրաւունքն յայտնէ , և եթէ գործողութենց մէջ սխալմունք մը ատած ենք Թոզ բարեհաճի ուղղել , որպէս զի մեք եւս մեր հայրենեաց օգտի համար ձեռնարկած փոքրիկ ծառայութիւնը սուրբ սիրով շարունակենք :

Ա.հատակի եղելութեանց ճիշտ պատմութիւնը

1869 Յունիս 15 ին քաղաքիս մայր եկեղեցւոյ մօտ նախակրթական մայր վարժարանի դատատուք բոլոր բարձին առ Թաղական խորհուրդն իրենց ամնականներուն անվճար մնալուն համար , մինչեւ իսկ կը կամենին վարժարանը փակել . մեք եւս այն միջոցին այն տեղ ներկայ գտնուելով հարցուցինք թէ տարեկան որչափ ծախս ունիք . մեզ պատասխանեցին . Վարժատան բոլոր դատատուած վարձքը 5000 դահեկան է : Ուստի արհեցինք թէ այդ վարժատան հոգը մեզ յանձնեցէք այսու դաշամբ , որ վարժարանը Սաղոմիելեան կոչուի . վարժարանին բակին մէջ կենդանութեան երկու հոյակապ գերեզմաններ կը շինեմ եւ մանկանց ուսումնքն միայն հատարակ ընդհերցուածքն և գրաւոր ուսումն պէտք է լինի

---

* կարծեմ թէ այս բառը (իբ) պիտի լինի :

* Այստ մը պիտ է իբ խօսքը կըսէ . անբաւական բառը անատանելի է մեզ համար զոր բոլոր ի բոց կը մեկնենք :

ֆակ ուրիշ ուսմունքներուն ուսումնարա-
նքին Թող ընդունին :

Տարեկան հինգ հազար ղուրուշ
ծախքը ինքնս կը վճարեմ և 50000 ղը-
րուշի մուրհակ մը հինգ Թաղի երեւ-
վոխանաց կը յանձնեմ, որ յետ մա-
հուանս իմ կայքիս սահման եւ կամ
գրաւով կամ հաւատարիմ երաշխաւո-
րութեամբ 0/0 10 շահով գործածեն և
5000 դահեկան տարեկան շահովը Սա-
ղամիխլեանի վարժարանը գրէ՛ի դար
հաստատ պահեն :

Մեր այս առաջարկութիւնները դը-
րի առնուելով կիւրակի օր տուրք եկե-
ղեցւոյ մէջ կարդացուելեան և ազդու-
րի դրուելեաւ , 15 օր պայմանաժա-
մով , բայց նախանձորդ մը չը գտնը-
ուելով՝ մնաց մեր վրայ և դաշնագիրն
քաղաքիս երեւելեաց և Թաղականաց
ստորագրութեամբ մեզ տրուելեաւ և
50000 ղուրուշի մուրհակը մեր կողմէն հինգ Թաղի երեւվոխանաց յանձնուելեաւ : Ապա և մեք յուսալով Ա-
ստուծոյ անհաւն ողորմութեանը 1869
Օգոստոս 1 էն սկսանք շարունակել
անդրս սիրով և տեղամբ մինչ ցվախ-
ճան կամիմբ շարունակել :

Երբ Աւիժ . Բառնաբաս Վարդա-
պետը Արապկիր եկաւ , լսողներ եղած
են Թէ ինչու այս վարժարանը Սաղա-
միխլեան պիտի կոչուի . նորին Աբժա-
նապատուութիւնը պատասխաներ է
Թէ , « Սաղամիխլեանի տուած փողը
ինձ բերէք , որպէս զի նորա հետ խօ-
սիմ» : Հակառակորդք երբ գրամին ձայ-
նը կը լսեն , կը լռեն : Ա. յս խօսքերը
երբ լսեցի իսկոյն խորհրդոյն ինդիր
տուի Թէ . « Որքան որ գաշինքով այս
լծոյն տակ մտներ և յօժարութեամբ կը
առնիմք , սակայն կը տեսանիմք որ մուտ
Թի մէջ մեզ և մեր վարժատան վնասոյ
խօսողներ կան . կը խնդրեմք որ ա-
տանք ի լոյս գան , մեր միտքս յարդ
ըրած ծախտերը տան , որպէս զի մենք
եւս վերնագիրը վերցնենք եւ ազդս
ուրիշ ծառայութիւն մը ընենք » :

Ա. յս խնդրոյն վերայ ընդհանուր
ժողով կազմելով խնդիրը քննել վրայ
մեզ պատասխանեցին Թէ « Ոչ յայ-
նի հակառակող մը կ'երեւի և ոչ նա-
խանձաւոր մը ուստի ըստ նախկին դաշ-
նագրութեան ձերոյ շարունակեցէք» :
այսպէս ասելով Ա. տենասպետ և Ա. տե-
նագպիր էֆէնտիներուս ստորագրու-
Թեամբ վաւերացեալ դաշնագիրն մեզ
ու զարկեցին . բայց և այնպէս մեք երբ
վարժարանի վերնագրոյն միւստեակ լի-
նելը տեսանք , Քաղաքական ժողովոյ
բոլոր տուինք և ստոյգինք Թէ , « Ձեր
վարժարանը ձեզ լիցի , մեք նոր ի նորոյ
վարժատուն մը շինել կը տամք » . բայց
Քաղաքական ժողովը զմեզ յորդորեց
և քաջալերեց , որպէս զի դարձեալ
շարունակենք . և ապա միւստեակ վեր-
նագիրը մաքրելով տեղը դրին :

Իսկ գալով Օրագրոյ այն խօսքին
Թէ , « Սաղամիխլեանը կատակեալ գու-
մարը պէտք է ուրիշ մեկուս մը յանձ-
նէ , կը պատասխանեմք . Մեք ամեն
ժամանակ պատրաստ ենք քաղաքիս
Ազգային Վարչութեանը յանձնել կը-
տակեալ փողը՝ հսկողութիւնը և իմա-
նալու Թիւնը մեր վերայ ընալով ըստ
դաշնագրոյն . բայց չը գիտեմք ինչ պատ-
ճառաւ յանձն չառնոյր : Կ'աղաչեմք
Օրագրոյ խմբագիր էֆէնտին՝ որ հա-
մոզէ Արապկիրի Ազգ . վարչութիւնը ,
որպէս զի յանձն առնուլ ընդունել մեզ-
մէ 50000 դահեկանի գումարը՝ տալով
մեզ և Ազգին այնպիսի վաստահու Թիւն
եւ ապահովութիւն՝ որ անհատական
տարուբ տարի պիտի կարողանայ վճա-
րել Սաղամիխլեան վարժարանի
5000 ղուրուշի ծախսը . յայնժամ մեք
եւս գոհ և ընդհակառակ կը լինիմք Թէ
խմբագիր էֆէնտին և Թէ քաղաքիս
Ազգային վարչութենէն :

Ա.հա այսպէս մեք ոչ ի մէնա եւ
ոչ յանկեան ուրեք գործած ենք , այլ
պայմանաւ և դաշնագրութեանի եւ
հայրենակցաց ընդհանուր հաւանու-
Թեամբը յանձն առած ենք սիրով և
անձնուիրաբար հոգիան մանկատան
բարգաւաճման եւ մուտ ու ջրպտանեան

բան կարի մերժում հոգ տանել, որով ազգայինք մեղմէ եւ մեք յազգայնոց գոհ և ընդհակառակ եմք։

Ուրեմն ինչ կը մնատէ այդ անձը՝ որ վարժատան վերնագիրը մրոտելուն նման մթութեան մէջ առանց ստորագրութեան նամակ հրատարակել կը տայ։ Մեք այդպիսեաց նպատակն ուրիշ բան չեմք տեսներ, բայց եթէ գործողներու գործը ջլատել և վարժատան յառաջադիմութեան համար նիւթական օգնութեան խորհուրդ խորհողներու խորհուրդն խափանել։ Աղաչեմք զԱստուած՝ որ այդպիսի անձանց, ուր ուրեք որ կան զգաստութեան հոգի տայ, որպէս զի նախանձու մահառիթ քենէն արթնալով կենայց և հոգւոյ փրկութեան արժանանան։

Սա եւս չը մոռնամք ասել, որ մեք մեր գաղնագրութիւնը ազգին հետ ըրած լինելով, եթէ ես Սաղաթիէլեան նրա և Սաղաթիէլեանք ձգդիւ չը գործադրեմք՝ մեղադրելի եմք և արդարև կ'անիրաւիմք. նմանպէս յազգայնոց ով ոք և իցէ եթէ համարձակի մեր գաղնագրութիւնը ոտքի տակ առնուլ նմանպէս կ'անիրաւի և չէ կարելի. վասն զի իմ գաղնիքս ոչ թէ անհատի այլ ազգիս հետ է։

Աւյժմի խօսելէ վերջը Քրիստոնէական անհիւանդութեամբ իմ չարագամ թշնամեացս բարիք կը մաղթեմ և ազգիս Հայոց ու հայրենակցաց անդորրութիւն և խաղաղութիւն հայցելով կը մնամ ազգիս օգտին համար պատրաստական ծառայ։

18$4. Յունվար 17։

Մահեւի Կարապետ
Սաղաթիէլեան։

ԹԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

Ամսոյս 7ին ս. Ծննդեան հանդեսը ամենայն խաղաղութեամբ կատարուեցաւ ըստ սովորութեան։

—Հետեւեալ զարմանալի լուրը Յոսպէի Աւժ. Տետուչը հաղորդեց 23 ին։

"Մօտ օրերս Գազայի մէջ հետեւեալ հետաքրքրական դէպքն տեղի ունեցած է. գողին մէկը գիշեր առեն տուն մը կը մտնէ, ուր միայն երեք հոգի կան եղեր, այն է հայր մը, մայր մը և փոքրիկ տղայ մը։ Գողը երբ կրակուսի տան մէջի եղածները ժողովել, տղան որ արթուն է եղեր, կսկսի լալ. գողը որպէս զի տղան լացէն հայրն ու մայրը չարթնան, դուրս կը տանի տղան և դառնալով իւր գործը կը շարունակէ. տղան գարձեալ կը լայ, ուրոյ վերայ հայրն և մայրն արթնալով կը լսեն տղուն ձայնը, որ դուրսէն կը գայ. անմիջապէս դուրս կը դիմեն, գողն եւս որպէս զի չը տեսնուի դըռան ետեւ կը սպասէ. որ առեն տունը յանկարծ կը փլի, տան տէրը իւր ընտանեօք հանդերձ կազատի, իսկ աւազակը իւր չարութեն զոհ կը լինի. երկրորդ օրը տունը մաքրելու առեն գտնելով մեռած մարդ մը կը գտնեն դռան ետեւ. որուն քով և կը գտնեն պարկ մը տան կարասեօք լեցուած, յորմէ կհմացուի մարդուն աւազակի լինելն"։

Ճշմարիտ է, որ Աստուած շատ անգամ Թոյլ կը տայ չարագործին իւր կամքին հետեւելու, շատ անգամ կըպատէ համբերութեամբ, որ անօրէնը իւր անօրէնութէն ձանապարհէն դառնայ, բայց երբ նա՝ Աստուծոյ համբերութիւնը՝ ի չարն գործ կը դնէ, այն ժամանակ Աստուած եւս իւր արդարութիւնը կսկսի ի գործ դնել այս աշխարհի մէջ ապրելի ձանապարհները, ինչպէս պարզ կերպիւ կը տեսնենք վերոյգրեալ դէպքէն։

	Դրս	Փոյ.
Ջեմլեքէն խաչատիր. Տպեալ 1869.		30
Ջենքիկոս եւ Մարիամ. Տպեալ 1870.	2	20
Ջրահանդ սիրոյ, դործ Մարկոսեան Յովսեփ վարժապետի. Տպ. 1870.	2	
Ջերուբնա Եդեսացի, եւ Եսայի կաթողիկոս Աղուանից. Տպեալ 1868.	3	
Ճաշոց գիրք. Տպեալ 2873.	300	
Ճառ հաղորդութեան. Տպեալ 1860.	4	
Ճառ դպրոցական, երիտ. վարք տեառնական. Տպեալ 1863 եւ վերջ՝ 1867.		30
Հայրապետութիւն առ Ձեռն. աշխատասիրեաց Եղիազար Մուրատեան.	3	
Յաւերժադրութիւն նախնեաց. Տպեալ 1856.	6	
Յառաջդրութիւն նախնեաց, դործ ԺԲ դարու. Տպեալ 1869.	14	
Յեկնութիւն Եփեսացւոց. Տպեալ 1850.	25	
Յեկնութիւն յայտնութեան, Կերպասի Լամբրոնացւոյ. Տպեալ 1853.	10	
Յիսուսեան Աստուծոյ ժամանակագրութիւն, դործ ԺԲ դար. Տպեալ 1871.	16	
—Նոյնը՝ ուղիղ դէշադրով լաղադատուած վարք ինչ տարբերութիւամբ.	12	
Յովհաննէս կաթողիկոս, պատմութիւն Հայոց. դործ նախնեաց Թ. դարու.	10	
Յովսէփ դեղեցիկ. Տպեալ 1849.	10	
Յարեկ. աղօթամատոյց Ս. Հօրն մերոյ դրիդորի Կարնեցւոյ. Տպ. 1868.	12	
Նար ընթերցուած. Տպեալ 1868.	5	
Նշխարհութիւն 'ի մեծն Ներսէս. Տպեալ 1863.	4	
Նոխ Հայրենասիրի. Տպեալ 1868.	4	
Նռանիի բարուց. Տպեալ 1857.	18	
Նռանիի տրամաբանութեան. Տպեալ 1869.	3	
Պատմութիւն Ս. Գրոց. Տպեալ 1867.	8	
Պատմութիւն նոր Կտակարանի. Տպեալ 1872.	7	
Պատմութիւն Ս. Երուսաղէմի, քաղուածոյ Թարգմանութեամբ. Տպ. 1872.	5	
Պատմութիւն Երուսաղէմի. աշխատասիրեաց Խորէն վարդապետ. (**)	8	
Պատմութիւն Ս. Լուսաւորչի. Տպեալ 1867.	4	
Պատմութիւն Լենկթիմուրայ. Տպեալ 1873.	10	
Պատմութիւն Հայոց. Տպեալ 1870.	6	
Պատմութիւն բարոյական. Տպեալ 1872.	7	
Պատմութիւն Հայոց պատերազմաց Ս. Եկեղեցւոյ. Տպեալ 1872.	16	
Պատմութիւն երկրամասի պարսկաստանութեան 'ի Հազէշտան. Տպեալ 1871.	20	
—Նոյնը՝ Գաղղիարէն լեզուաւ.	20	
Պարզիս խաչատիր, այլ եւ այլ անդամ տպուած.	10	
—Նոյնը՝ մեծ դիրքով	6	
—Նոյնը միշտ՝ դպրոցներու համար. Տպեալ 1873.	6	
Նոյնը՝ վարք դիրքով եւ մանր դրով.	3	
Սինօ օրագիր, կազմեալ 1866ին մինչեւ 1873. աչխարհիկ լեզուաւ.	40	
Պատարագութիւն Երուսաղէմի. Տպեալ 1859 : (**)	4	
Պարժանութիւն վարդապետ մանկանց. Տպեալ 1868.	6	
Չանվիլ տեղագրութիւն Երուսաղէմի. Տպեալ 1855. (*)	3	
Տարեւք լուսաւորչութենէն. Տպեալ 1852. (*)	6	
Տիեզերութիւն Հովսեփեան. Տպեալ 1856. (*)	8	
Տրամաբանութիւն, Պատանւոյ Դրիդորի Փէշտիմալճեան. Տպեալ 1853. (*)	15	
Տօնացոյց. Տպեալ 1868.	10	
Փերեան, հին սեռ. Տպեալ 1872.		20
Քերեան Գաղղիերէն լեզուի. Տպեալ 1874.	2	20
Քերականութիւն Հայերէն լեզուի. Տպեալ 1870.	4	
Քերականութիւն Գաղղիերէն լեզուի. Տպեալ 1869.	3	
Քրիստոնէական Հանուսօտ, Հայկէն եւ Պարսկերէն լեզուաւ. Տպ. 1870.	2	
Օրացոյց եւ դուշակութիւնք տարւոյ.	1	

ՅԱՆԿ

ՅՈՒՆՎԱՐ

ՆՈՐ ՏԱՐԻ 1

Ա. Աթոռոյս ընդհանուր ժողովի 1874ի առաջին բացումն 7

Ի՞նչ պիտի լինէր ընկերականութեան վիճակը, եթէ ֆրմասոնէութիւնը չերեւէր բնաւ աշխարհի վերայ. (Շարունակելի) 9

Հոմանական Ատուածաբանութիւն 12

Արժանաւորութիւն և գերազանցութիւն եկեղեցական պաշտօնէութեան 14

Առակական. (Շարունակելի) 16

Նոր տարւոյ առիթիւ խօսուած ճառեր 18

Նամակ 22

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ 24

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԱՑՄԱՆՔ

Ա. Սիօնը ամէն ամիս կը հրատարակուի 24 երեսէ բաղկացեալ 8 կուէկս ուղղագիր թղթով։

Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Սկզբունքէ, հանդերձ ճանապարհի ծախքովը կանխիկ վճարելի։

Գ. Զատ առտակ առնել ուզողը, պէտք է ամէն մէկ առտկին չորս գահկան վճարէ։